

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԾԻ ՇՈՒՐՋ Գագիկ Տեր-Յարությունյան

Վերջին ամսվա ընթացքում տեղեկատվական դաշտում կտրուկ աճել է իրանին վերաբերող վերլուծությունների եւ մեկնաբանությունների թիվը: Դա պայմանավորված է ոչ միայն այդ երկրի միջուկային ծրագրի շուրջ ընթացող քննարկումներով, այլև հետեւյալ հանգամանքներով.

❖ Դեռեւս 2004-2005թթ. Պենտագոնի փորձագետները բազմիցս նշել էին, որ իրանի դեմ ռազմական գործողություններ սկսելու դեպքում ամերիկյան թեւավոր հրթիռների եւ օդուժի օգտագործման համար գարնանային ամիսներին օդերեւութաբանական պայմաններն ամենահարմարն են (հիշենք, որ իրաքի դեմ հարձակումը սկսվեց հենց 2003-ի ապրիլի վերջին-մայիսի սկզբին):

❖ Քոնդոլիզա Ռայսի այցը Լոնդոն եւ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ նախարար Զեկ Սթրոուի հետ նրա անսպասելի համատեղ այցելությունը Բաղդադ շատերի կողմից ընկալվեց որպես իրանի դեմ ռազմական գործողություններ սկսելուց առաջ դաշնակիցների միջեւ վերջնական պայմանավորվածությունների ձեռքբերում:

❖ Իրանը վերջերս իրականացրեց լայնածավալ ռազմածովային զինավարժություններ Պարսից ծոցում, որոնց ընթացքում կիրառվեցին եւ հանրությանը ներկայացվեցին ռազմական տեխնիկայի նոր նմուշներ՝ ռադարների համար անորսալի հրթիռներ, արագընթաց տորպետներ եւ այլն: Զինավարժություններն ընկալվեցին որպես սպասվող ամերիկյան հարձակումից առաջ իրանական զինուժի մորիլիզացիա, քաղաքական վճռականության դրսեւորում եւ ազրեսիայից պաշտպանվելու հնարավորությունների ցուցադրում:

Այս հանգամանքների համադրումը որոշ վերլուծաբանների հիմք է տալիս ենթադրելու, թե ԱՄՆ-իրան պատերազմական գործողությունները կարող են սկսվել արդեն այս գարնանը:

Յարկ է նկատել, որ իրանի որդեգրած գաղափարախոսությունը, նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը, իրոք, մարտահրավեր են՝ ուղղված ԱՄՆ-ին: Այսօր օբյեկտիվորեն առկա են այն

նախապայմանները, որոնք դրդում են այդ երկու տերություններին պատերազմել միմյանց դեմ: Յամառուտակի թվարկենք դրանց մի մասը.

1. ԱՄՆ-ը եւ Իրանն ունեն ննանություններ, քանի որ երկուսն էլ հանդիսանում են այս կամ այն չափով թեոկրատական եւ գաղափարականացված տերություններ: Միեւնույն ժամանակ, նրանք կանգնած են գաղափարախոսական տարբեր բեւեռներում: Եվ եթե Իրանը իսլամական թեոկրատական պետություն է, ապա նախագահ Բուշր ագրեսիվ ավետարանչական է. նա հաճախ է իր ճառերում նշում, թե իրեն ուղղորդում է նախախնամությունը: Երկու տերություններում էլ թեոկրատական եզրաբանությունն օգտագործվում է ազգային շահերը լավագույնս պաշտպանելու համար: Յատկանշական է, որ ամերիկյան նեռապահ-պանողականության սկզբունքները զգալի չափով բնորոշ են նաև ժամանակակից Իրանի առաջատար քաղաքական ուժերին (պահպանողականություն՝ արժեքային համակարգում եւ ներքին խնդիրներում, արդիական եւ հեղափոխական տարրերով գործելակերպ՝ տնտեսական զարգացումներում եւ արտաքին քաղաքականությունում):

2. Իրանն ընտրել է զարգացման երրորդ ուղի՝ ոչ սոցիալիզմ, ոչ կապիտալիզմ, որն իրականում այդ երկու համակարգերի դրական դրույթների համատեղում է: Այսօր այս կամ այն չափով ննան եղանակով են զարգանում նաև Չինաստանը եւ Բելառուսը: Այդպիսով Իրանը ոչ միայն հակադրվում է ԱՄՆ դասական-անգլոսաքսոնյան ազատականությանը, այլեւ հանդիսանում է զարգացման այլընտրանքային մոդել ինչպես իսլամական, այնպես էլ համայն աշխարհի համար:

3. Իրանը (ի դեպ՝ նույն Չինաստանի եւ Բելառուսի հետ մեկտեղ) համարվում է ամենաբարձր ինքնիշխանություն ունեցող երկրներից մեկը: Դրանով նա հակադրվում է ԱՄՆ-ի կողմից ձեւավորված աշխարհակարգի սկզբունքներին, որով ենթադրվում է ազգային պետությունների ինքնիշխանության նվազում:

4. Իրանը փորձում է լիարժեք միավորվել Շանհայի համագործակցության կազմակերպությանը (առայժմ ունի դիտորդի կարգավիճակ): Այսինքն՝ Իրանը հարում է այն ռազմաքաղաքական ուժին, որն ունենալով բավականաչափ ներուժ, կարող է նոտ ապագայում դառնալ այլընտրանք ԱՄՆ-ին եւ վերափոխել միաբեւեր աշխարհակարգը բազմաբեւերի: ԱՄՆ-ը, համաձայն իր կանխարգելիչ ռազմավարության, ձգտում է անել ամեն ինչ, որպեսզի ննան միավորումը չկայանա:

5. Իրանը տիրապետում է ածխաջրածնային էներգակիրների հա-

րուստ պաշարների. գազի (որը գործնականում դեռևս չի արդյունահանվում)` աշխարհում երկրորդ եւ նավթի՝ չորրորդ: ԱՄՆ ներկայիս աշխարհատնեսական մոտեցումներում էներգետիկ գործոնը կարեւորագույններից է, եւ այդ առումով իրանը դարձել է թիրախ ԱՄՆ-ի համար:

6. Իրանը, Իրաքի տապալումից հետո, մերձավորարեւելյան տարածաշրջանում միակ պետությունն է, որ իրական վտանգ է ներկայացնում ԱՄՆ ռազմավարական դաշնակից իսրայելի համար: Այս գործոնը հաճախ վճռորոշ նշանակություն է ձեռք բերում ԱՄՆ ռազմաքաղաքական հաշվարկներում:

7. Իրանն ընդդիմանում է ԱՄՆ ռազմավարությանը մերձավորարեւելյան տարածաշրջանում, մասնավորապես՝ նրա Մերձավոր Արեւելք նախագծին: Համաձայն որոշ փորձագետների՝ Իրաքում ԱՄՆ գինուժի դեմ զինված դիմադրությունը զգալի չափով աջակցվում է Իրանի կողմից, եւ անհնարին է լուծել Իրաքի խնդիրը, քանի դեռ ապստամբներին աջակցում է Իրանը:

Վերոհիշյալ հանգանանքների համախումբը սկզբունքորեն կանխորշում է եթե ոչ ռազմական գործողություններ, ապա երկարատեւ դիվանագիտական, տեղեկատվական եւ տնտեսական հականարտություն ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ: Հարկ է նաեւ նշել, որ հնարավոր զինված բախումը, ամենայն հավանականությամբ, չի սահմանափակվելու Իրանի միջուկային օբյեկտների ռմբակոծությամբ. ԱՄՆ նպատակը Իրանի քաղաքական համակարգի փոխումն է, եւ այդ համատեքստում՝ հնարավոր պատերազմը պետք է որ լայնածավալ լինի: Ռազմական գործողությունների պարագայում Իրանի դեկավարությունը կարող է օգտագործել իր տրամադրության տակ եղած բոլոր (ընդհուած՝ միջուկային) միջոցները՝ այստեղից բխող հետեւանքներով: Այս հանգանանքն էապես նվազեցնում է ԱՄՆ-ի կողմից ռազմական գործողություններ ծավալելու հավանականությունը, սակայն չի բացառում նման սցենարը:

Ինչ վերաբերում է կոնկրետ ժամկետներին, ապա այս գարնանը գործողությունների սկանան հավանականությունը ցածր է: Քաղաքական հարբությունում դա պայմանավորված է գլխավորապես հետեւյալ երկու գործոններով.

❖ Այս տարի աշնանը ԱՄՆ-ում տեղի են ունենալու Կոնգրեսի ընտրություններ: ԱՄՆ Հանրապետական կուսակցության դիրքերը՝ Իրաքի հիմնախնդրի համատեքստում, այսօր հեռու են լավ լինելուց: Նման պայմաններում Բուշի (որի վարկանիշն էապես նվազել է) վարչակազմը

դժվար թե մինչեւ այդ ընտրությունները փորձի կատարել այնպիսի քայլեր, որոնց հետեւանքները բարդ է հաշվարկել:

❖ Նախագահ Բուշի միակ հնարավոր դաշնակիցը՝ Թոնի Բլերը, նույնպես գտնվում է ներքաղաքական ծանր իրադրությունում (նրա վարկանիշը հասել է ռեկորդային ցածր ցուցանիշի՝ 30%): Յամաձայն որոշ փորձագետների՝ ստեղծված իրավիճակում, Մեծ Բրիտանիայի կողմից ԱՄՆ ռազմական գործողություններին աջակցելու պարագայում, Բլերը կարող է զրկվել իր պաշտոնից: Նկատենք, որ ԱՄՆ-ի կողմից իրանի դեմ ռազմական գործողություններ ծավալելու դեպքում՝ բրիտանական օդանավակայանները կարեւորագույն դերակատարում ունեն, եւ այս հարցում առանց բրիտանական աջակցության՝ ամերիկացիները, հանաձայն զինվորական փորձագետների, դժվար թե ոմբակոծեն իրանը:

ԹՈՒՐՖԻԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌՁԵՎ Սարգիս Չարությունյան

Սառը պատերազմի ավարտից ի վեր առաջին անգամ, անվտանգության ապահովման տեսանկյունից, թուրքական պետությունը հայտնվել է աննախաղեա ծավալի մարտահրավերների առջեւ:

Ներկայումս թուրքական Գլխավոր սպայակույտի (ԳՍ) պատկերացմամբ, գոյություն ունեն առնվազն հինգ կետեր, որոնց շուրջ ընթացող զարգացումները կարող են հանգեցնել Անկարայի կողմից զինված ուժի կիրառման (նման քանակը եղակի է Եվրոպական, հետխորհրդային, մերձավորարեւելյան ու հյուսիսաֆրիկյան տարածաշրջաններում).

- ❖ Եգեյան ծովում հունական ջրային սահմանների ընդլայնումը,
- ❖ Կիպրոսի խնդիրը,
- ❖ Իրաքյան զարգացումները՝ առաջին հերթին քրդական պետության հռչակնան առումով,
- ❖ Իրանական հարցը. ընդ որում՝ Երկու ասպեկտներով՝ Թուրքիայի տարածքում գտնվող ամերիկյան ռազմակայաններին իրանական հրթիռային հարվածների դեպքում եւ իրանում միջերնիկ (ադրբեջանական գործոն) բախումների կամ քրդական հզոր շարժման պարագայում,
- ❖ Եւ վերջապես՝ հայ-ադրբեջանական հնարավոր ռազմական գործողությունների ժամանակ Յայաստանի ԶՈՒ կողմից, մասնավորապես, Նախիջևանի ուղղությանը, հաջողության ձեռքբերման դեպքում:

Լրջացել են նաեւ ներքին սպառնալիքները: Երկարամյա պայքարից հետո քենալական Թուրքիայուն իշխանության են Եկել (լեզիտիմացվել են) իսլամիստական գաղափարախոսություն դավանող ուժերը: Այդ հանգամանքը կարող է միայն վկայել թուրքական պետության հետագա իսլամականացման մասին:

2006թ. գարնանը նոր թափով սրվել է քրդական հարցը: Անկախ պետության համար պայքարող քրդական ռազմաքաղաքական կազմակերպությունների դեկավար շերտերում սերնդափոխությունը Թուրքիային խոստանում է լարվածության վերստին աճ:

Ի հավելումն, վերջին տարիներին տեղի ունեցած ֆինանսատնտեսական ճգնաժամների հետեւանքները միայն անբողջացնում են ընդհանուր պատկերը՝ խորացնելով թուրքական պետության-հասարակության ներքին հակասությունները:

Եվ վերջապես, ռազմավարական հարթությունում նույնպես Թուրքիայի առջեւ ծառացած խնդիրները բավական սուր են, եւ ամենակարեւորը՝ կրկին աննախաղեա: Ավելի քան երեք տարի առաջ Վաշինգտոնի հետ ծագած տարածայնությունները ոչ միայն չեն հարթվել, այլեւ հեռանկարային առումով դեռ կունենան իրենց զարգացումը:

Ռազմավարական նշանակության հաջորդ խնդիրը Եվրոպական Միությանն անդամակցելու հարցն է: Սեղանին դրված են թուրքական ներկայիս պետականության քաղաքակրթական ընտրության, քեմալական համակարգը ճգնաժամից փրկելու հարցերը, որոնք (եւ ընդհանուր առմանը՝ Արեւմուտքի հետ ավանդական փոխգործակցությունը) նախկինում կարգավորվում էին այլ ձեւաչափերով՝ տարաբնույթ դաշինքներ, ՆԱՏՕ եւ այլն:

«Ազգային անվտանգության քաղաքականության փաստաթուղթը»

Դաշվի առնելով վերը ներկայացված իրողությունները եւ հավանական զարգացումները՝ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ) մոտավորապես 2004թ. սկսեց երկրի ազգային անվտանգության նոր հայեցակարգի մշակման աշխատանքները, որոնք նախագծի տեսքով արդեն 2005թ. ներկայացվեցին կառավարությանը: Մի քանի ամիս տեսած քննարկումներից հետո երդողանի կառավարությունը 2006թ. մարտի վերջին հաստատեց «Ազգային անվտանգության քաղաքականության փաստաթուղթը» (ԱԱՔՓ): Այն թուրքական պետության առջեւ ծառացած սպառնալիքներն ու մարտահրավերները բաժանում է երկու հիմնական ուղղությունների՝ դասական ու նոր բնույթի (ասիմետրիկ), իր վրա կրելով նմանատիպ արեւմտյան նշակումների ազդեցությունը:

Արտաքին վտանգների շարքից առանձնանում է եգեյան ծովում գտնվող հունական որոշ կղզիների տարածքային ջրերի սահմանների ընդլայնումը 6 ծովային մղոնից (1 ծովային մղոն = 1.853 մետր) մինչեւ միջազգային պրակտիկայում բավական տարածված 12 մղոնի: Այդ պարագայում թուրքական սեւծովյան ու միջերկրածովյան նավատորմերը չեն կարող, առանց մուտք գործելու հունական տարածքային ջրեր, անհրաժեշտության դեպքում փոխօգնության հասնել միմյանց՝ միավորվել: Նման հեռանկարն էականորեն նվազեցնում է Թուրքիայի ռազմածովային ուժերի օպերատիվ-տակտիկական հնարավորությունները, հետեւաբար՝ հզորությունն ընդհանուր առմանը: Ըստ ԱԱՔՓ-ի, խնդրի առնչությանը Աթենքի նման որոշումն Անկարան ընկալելու է որպես casus belli:

Թուրքիան շարունակում է կենսական համարել Կիպրոսում թուրքական ռազմութիւն (մոտ 30 հազար զինվոր) առկայությունը: Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության գոյությունը դիտարկվում է որպես Միջերկրական ծովի արեւելյան հատվածում թուրքական ազդեցության պահպանման ռազմավարական հենակետ՝ այդ թվում Թուրքիայի միջերկրածովյան նավատորմի օպերատիվ-տակտիկական հնարավորությունների առումով: Կիպրոսի խնդրի կարգավորման ձեւաչափ է դիտարկվում ՄԱԿ-ը:

Անկարայի համար էական նշանակություն ունի իրաքի «տարածքային անբողջականության» եւ «քաղաքական միասնության» պահպանումը:

Արտաքին մարտահրավերներից կարեւորվում է նաև իրանական հարցը: Վերջինիս վերաբերյալ թուրքական անվտանգության կառույցներում գերիշխող տեսակետի մասին մարտի վերջին Վաշինգտոնում բարձրածայնեց Թուրքիայի ԳՍ Ծրագրավորման եւ քաղաքականության վարչության պետ, գեներալ Լեյտենանտ Շիլմի Արին Զորլուն. «Մենք [Թուրքիան] միջուկային գենքից գերծ տարածաշրջանի կարիքն ունենք»:

Մասնավորապես, իրանական թեմայի հետ է կապված թուրքական ԱԱՓ-ում տեղ գտած այն ձեւակերպումը, թե «Չահար» հրթիռները վտանգ են ներկայացնում Թուրքիային:

Ներքին մարտահրավերների կապակցությամբ թվարկված են արմատական իսլամը, անջատողականությունը (քրիստոնությունը) եւ ծայրահեռ ձախակողմյան շարժումները:

Թուրքական ռազմութիւն վերագինումը

Թուրքիայի անվտանգության ոլորտում կատարված հաշվարկների համաձայն՝ թուրքական պետության համար վերստին կենսական նշանակություն են ձեռք բերում սեփական զինված ուժերը, որոնց ներկայությունը երկրի որոշումների ընդունման մեխանիզմում սառը պատերազմի ավարտից հետո կարծես թե միտում ուներ կրծատվելու:

Քանի որ թուրքական բանակը չի պատրաստվում ենթարկվել համակարգային վերափոխումների (այդ մասին տեղեկություններ դեռ չկան), ապա ռազմութիւն հզորացնան պատերացումները գերազանցապես հանգում են սպառազինման ոլորտին:

1990-ական թթ. սկզբից յուրաքանչյուր տարի Անկարան նոր սպառազինությունների ձեռքբերման ուղղությամբ պաշտոնապես ծախսում էր միջինը մոտ \$3.5 մլրդ: 1990-ական թթ. կեսերին Թուրքիայի ռազմական գերատեսչությունում սկսեցին խոսել երկրի ԶՈՒ երկարաժամկետ (15-20 տարի) վերագինման ծրագրերի մասին, եւ անգամ

նշվում էին հիմնական ուղղություններն ու ֆինանսական միջոցների չափերը: Բայց 2000-2001թթ. երկրում բռնկված ֆինանսատնտեսական ճգնաժամն անհրականանալի դարձեց թուրքական ռազմութիւն վերագինման ծրագրերը: Մասնավորապես, 2001թ. ապրիլին Անկարան ստիպված եղավ սառեցնել 31 պատվեր՝ մոտ \$20 մլրդ ընդհանուր արժողությամբ:

2005 թվականն այդ առումով, թերեւս, պետք է շրջադարձային համարել: Ըստ ամենայնի, 2005թ. կայացվեց սկզբունքային որոշում՝ վերսկսել ռազմութիւն վերագինման խոշոր ծրագրերը, ընդ որում՝ հաշվի առնելով մի քանի հիմնական հանգամանքներ.

❖ նոր սպառագինությունների բացակայությունը թուրքական ԶՈՒ-ում՝ նման դեպքերի համար թույլատրված ժամկետների առումով, արդեն իսկ հասել է իր կրիտիկական սահմանագծին, որից այն կողմ կարող է սկսվել թուրքական ԶՈՒ մարտունակության կտրուկ անկում,

❖ այդ համատեքստում հիմնական հետեւությունն այն է, որ ժամանակն աշխատում է միայն ի վեհական ԶՈՒ-ի՝ հետագայում պատճառ հանդիսանալով ավելի մեծ ծախսերի,

❖ նոր սպառագինությունների ձեռքբերման շարունակական հետաձգումը ոլորտի միջազգային շուկայում կարող է լուրջ հարված հասցնել Թուրքիայի գրավչությանը,

❖ վերջինիս հետ կապված՝ Անկարան կարող է հեռանկարում մի զգալի նասով կորցնել իր քաղաքական եւ տնտեսական գրավչությունը Միացյալ Նահանգներում ու Եվրոպական առաջատար երկրներում,

❖ մյուս կողմից՝ սպառագինության ոլորտում մեկնարկած խոշոր ծրագրերը խթանիչ դեր կունենան թուրքական տնտեսության համար, քանի որ պատվերների մի նասը ենթադրում է տեղական ձեռնարկությունների նասնակցություն,

❖ Եւ վերջապես, թուրքական համապատասխան ձեռնարկությունների մասնակցությունը ռազմարդյունաբերական ոլորտի ժամանակակից տեխնոլոգիական ցիկլերին հնարավորություն է ընձեռում Թուրքիային՝ հետ չմնալ բնագավառի զարգացումներից:

Նախատեսվում է, որ միայն 2006թ. Թուրքիան երեւան է հանելու մոտ \$10 մլրդ-ի սպառագինության պատվերներ: Ծրագրվում է ձեռքբերել նոր (հիմնագերորդ) սերնդի ռազմական ինքնաթիւներ, ուսումնավարժական ինքնաթիւներ, հարվածային ու տրանսպորտային ուղղաթիւններ, հակաօդային պաշտպանության համակարգեր եւ հետախուզա-

կան արբանյակ (տարրեր հաշվարկների համաձայն՝ այն գնահատվում
է \$250-400 մլն և ծրագրվում է ուղեծիր դուրս բերել մինչեւ 2010թ.):

Բացի այդ, նախատեսվում է թուրքական ՁՈՒ համար երրորդ սերնդի
տաճկի արտադրության ծրագրի մեկնարկ: Ծրագրվում է նաև թուրքա-
կան ՁՈՒ սպառազինության մեջ առկա ռազմական ինքնաթիռների եւ
տաճկերի արդիականացում: Ընդհանուր առնամբ, կարծաժամկետ
հեռանկարում Անկարան մտադիր է նոր սպառազինությունների ձեռք-
բերման նպատակով տարեկան հատկացնել \$3.5-4 մլրդ:

Ընդհանրացումներ

Միջազգային համակարգի գործառնության տեսանկյունից թուրքա-
կան պետությունը հանդիսանում է խնդրահարույց: Անգամ աշխարհա-
կարգի փոփոխությունը չնպաստեց Թուրքիայի առջեւ ծառացած ար-
տաքին ու ներքին մարտահրավերների կրծատմանը: Որոշ դեպքերում
դրանք անգամ աճեցին: Թուրքիան ունի խնդիրներ իր սահմանի գրեթե
ողջ երկայնքով, ներքին՝ միջերենիկական, միջսոցիալական եւ իսլա-
մական արմատականության հիմնահարցեր: Հետեւաբար, միջազգային
ճարտարապետությունում թուրքական պետության խնդրահարույց
ներկայության պատճառը համակարգային թերություններն են:

Ըստ ամենայնի, առաջիկա ժամանակահատվածում այդ խնդիրները
խորանալու են: Միջազգային հարաբերություններում քաղաքակրթա-
կան արժեքների կարեւորության շեշտակի աճը Թուրքիային դնում է
ծանր դրության մեջ, որն էլ կարող է քայլայիշ հետեւանքներ ունենալ
այդ պետության ներքին զարգացումներում:

Այդ ամենը նպաստելու է, որպեսզի միջազգային համակարգի ուժի
կենտրոնների հաշվարկներում թուրքական պետության նշանակու-
թյունը նվազի:

Կանխելու համար վերջինիս բացասական հետեւանքներն իր վրա,
Անկարան՝ չունենալով համարժեք տնտեսական հզորություն, քաղաքա-
կան համակարգի կենսունակություն, ձգտելու է իր ռազմավարական
նախագծերում վերստին շեշտը դնել սեփական ուժային կառույցների
(որպես թուրքական պետական համակարգը պահպանող միակ գործոն)՝
հզորացնան վրա:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՆ

Արտակ Շաքարյան

Առաջին աշխարհամարտում պարտվելուց ու մեծ ջանքերի շնորհիվ Թուրքիայի Հանրապետություն ստեղծելուց հետո թուրքական վերնախավը, Մ.Քենալի առաջնորդությամբ, իր հայացքը դարձրեց դեպի Արեւմուտք՝ այն համարելով լավագույն ուղին երկրի զարգացման համար: Արեւմտականացման տակ Անկարան նկատի ուներ աշխարհիկությունն ընդդեմ հսկամիզմի եւ ամենեւին նպատակ չուներ հիմնովին փոխառել արեւմտյան ժողովրդավարությունը:

Այնուամենայնիվ, Արեւմուտքի հետ տեւական համագործակցումը ստիպեց Անկարային գնալ ինչ-ինչ քայլերի՝ ննանակելով ժողովրդավարություն: Մասնավորապես, 1950-ական թթ. մտցվեց բազմակուսակցական համակարգ, սակայն երկրում բոլոր գործնթացները գտնվում էին Արարյուրքի պատգամների պահապան գինվորականության համակ ուշադրության ներքո: Ամեն մի շեղում արժանանում էր բարձրաստիճան գինվորականության «մեկնաբանությանը», որը հասարակությունում գրեթե օրենքի ուժ էր ստանում: Եվ ամեն անգամ, երբ գինվորականությունն զգում էր, որ քաղաքական իրավիճակը դաշնում է անկառավարելի, Թուրքիայում տեղի էր ունենում ռազմական հեղաշրջում, որը կյանքը վերադարձնում էր ի շրջանս յուր՝ դեպի Արարյուրքի կողմից ուրվագծված շրջանակներ:

Այսօր էլ գինվորական վերնախավն ունի իր, այսպես կոչված, «կարմիր սահմանները», որոնք հանդիսանում են հնարավոր զիջումների շրջանակներ: Այդ զգայուն կետերից են Կիպրոսի, քրդական ու հայկական հարցերը, իսլամիստական շարժումները եւ այլն, որոնց ստատութվոյի խախտման հավանական վտանգը շատ սուր է ընդունվում Գլխավոր սպայակույտի դեկավարության կողմից:

Թուրքիայի քաղաքական կյանքում շատ մեծ կարեւորություն է տրվում Ազգային անվտանգության խորհրդին ու նրա ամենամսյա նիստերի որոշումներին, որոնք ուղղորդում են պետության գրեթե բոլոր օղակների աշխատանքները: Մինչեւ վերջերս այս խորհրդի կազմում մեծամասնություն էին կազմում գինվորականները, ինչն ապահովում էր նրանց գործուն նաև ակցությունը երկրի կառավարմանը: Սակայն

անսալով Եվրամիության պահանջներին՝ Անկարան գնաց խորհրդի կազմում փոփոխությունների, կրծատելով զինվորականների քանակն ու ավելացնելով քաղաքացիական պաշտոնյաների թիվը:

Ընդհանուր առմանք, կարելի է ասել, որ Անկարայի՝ Եվրամիությանն անդամակցելու գործընթացը մեծ խնդիրներ է առաջացնում Թուրքիայի հանար: Եվրոպացիներն այլևս ավելի ուշադիր են Թուրքիայում տեղի ունեցող զարգացումներին եւ ուշիուշով հետեւում են իրենց կողմից Անկարային առաջադրված «կոպենհագենյան քաղաքական չափանիշների» կենսագործմանը:

2002թ. իշխանության եկած Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ), ունենալով խորհրդարանում բացարձակ մեծամասնություն, հապճեպորեն ընդունեց ԵՄ պահանջած օրենքներն ու իրավական նորմերը: Անկարան կրկին փորձ կատարեց խարել Արեւմուտքին՝ թղթի վրա ընդունելով նրա պահանջները, սակայն իրականում պահպանելով գործերի հին ընթացքը: Սակայն քանի դեռ Թուրքիան ցանկություն ունի դառնալ ԵՄ լիիրավ անդամ եւ դա հոչակում է իր քաղաքականության հիմնական վեկտոր, նա ստիպված է լինելու գնալ զիջումների՝ թեկուցեւ դանդաղ քայլերով, հաստատելով ժողովրդավարական նորմեր երկրում:

Կարելի է ասել, որ ներկա կառավարությանը ժողովրդավարական որոշ նորմերի ընդունումը ծեռատու է: Արդի Թուրքիայի պատմությունում միշտ պայքար է գնացել աշխարհիկ զինվորականության ու իսլամիստների միջեւ: Թուրքիա բերելով խոսքի ու դավանանքի ազատություն՝ իսլամիստները կարծես ազատվում են զինվորականության վերահսկողությունից ու ստանում գործունեության ավելի լայն դաշտ, ինչը եւ մտահոգության տեղիք է տալիս Գլխավոր սպայակույտին:

Այսպես, 2006թ. հունվար ամսին ամերիկյան հայտնի «Foreign Affairs» ամսագրում իրատարակվեց մի հոդված երեք հեղինակների ստորագրությամբ, որոնցից երկուսը նախկինում եղել են զինվորական, իսկ մեկը Թուրքիայի զինված ուժերի գնդապետ է: Յոդվածում հայտնվում է այն միտքը, որ թեեւ զինվորականությունը միշտ եղել է Թուրքիայի արեւմտականացման կողմնակից, սակայն գործերի ներկա ընթացքը կարող է բերել այնպիսի մի իրավիճակի, որ «կարմիր սահմանների» անցման դեպքում բանակը կարող է եւ իրաժարվել ժողովրդավարության սատարման իր ստանձնած դերից:

* * *

Իրոք, Անկարայի համար իրավիճակը բարդ է: Իրական ժողովրդավարությունը Թուրքիայում մեծ խնդիրներ կարող է երեւան հանել: Թուրքիայում միասնությունը խարսխված է բիրտ ուժի ու զինվորական պետությունից վախի վրա: Եվ այն օրը, երբ գա խոսքի ու դավանանքի իրական ազատությունը, գործեն ժողովրդավարական նորմերը, պաշտպանվեն մարդու իրավունքները, իսկ քաղաքական դաշտում գործեն քիչ թե շատ արդար օրենքները, ապա Թուրքիան որպես միասնական երկիր կգոյատելի, թերեւս, միայն մի քանի տարի:

Այստեղ առաջին հերթին պետք է հաշվի առնել մոտ մեկ հարյուրամյակ անկախություն պահանջող քրդերին, որոնք Թուրքիայում կազմելով ստվար զանգված (համաձայն որոշ հաշվարկների՝ բնակչության 15-20%-ը՝ լիովին հեռացված են եղել երկրի կառավարման օղակներից: Մինչդեռ պետք է նկատի ունենալ, որ ի հեճուկս թուրքական պետության տարիաննան քաղաքականության՝ քրդական տարրը դեռ բավական հավաք կերպով բնակվում է երկրի հարավ-արեւելքում, որտեղ կազմում է բնակչության ճնշող մեծամասնությունը: Այդուհանդերձ, քրդական կուսակցությունները ներկայացված չեն երկրի խորհրդարանում: Պատճառը երկրի ընտրական հանակարգի հատուկ մշակված ձեւն է, համաձայն որի՝ կուսակցության ստացած ձայները բաղդատվում են ողջ երկրով մեկ արդյունքների հետ, ինչպես նաև բարձր ընտրաշեմը՝ 10%: Այսպիսով, ստացվում է, որ տվյալ տարածքում 90% ձայն հավաքած քրդական կուսակցությունը չի կարողանում պատգամավորական նույնիսկ մեկ արոռ ստանալ խորհրդարանում:

Երկրում վերջին ժողովրդավարական զարգացումներից հետո քրդերն իրենց քաղաքական ներուժն օգտագործեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Այսօր հարավ-արեւելքում կա 56 քուրություններում գործություն ունենալու 10%: Այսպիսով, ստացվում է, որ տվյալ տարածքում 90% ձայն հավաքած քրդական կուսակցությունը չի կարողանում պատգամավորական նույնիսկ մեկ արոռ ստանալ խորհրդարանում:

Ընդհանուր առնամբ, կարելի է ասել, որ քրդերը սովորեցին խաղալ ժողովրդավարության օրենքներով: Թերեւս, արեւմտյան խորհրդականների ազդեցությամբ քրդական շարժումն անցում է կատարել նոր, ավելի արդյունավետ մակարդակի՝ ահաբեկչական գործողություններն աստիճանաբար փոխարինելով քաղաքական պայքարով, մեծապես օգտագործելով ԵՄ հետ բանակցային գործընթացի ընձեռած հնարավորությունները:

Սրա վառ օրինակն են վերջին զարգացումները: Նախ, տարեսկզբին

տեղի ունեցավ քրդերի հարցերին նվիրված կոնֆերանս: Սա շատ հետաքրքիր երեւույթ է Թուրքիայում, որտեղ դեռ ընդամենը մի քանի տարի առաջ քրդերին անվանում էին «լեռնային թուրքեր», իսկ «եսքուրդ եմ» նախադասության համար դատում էին որպես հայրենիքի դավաճանի: ԵՄ ճնշումների ներքո Անկարան թույլատրեց քրդերեն լեզվով հեռուստաեթերներ, իսկ տեղի քաղաքապետերն արդեն այն աստիճանի ինքնավստահություն են ցուցաբերում, որ ուղիղ եթերում քրդերենով հարցազրույցներ են տալիս ու հարցականի տակ դնում քրդական բանվորական կուսակցության ահարեկչական կազմակերպություն լինելու վերաբերյալ տեսակետը:

Սակայն ամենակարեւոր իրադարձությունը քրդական ըմբոստությունն էր, որն սկիզբ առավ 2006թ. մարտի վերջին: Սա իրավես նշանավորում է քրդական շարժման նոր որակ, քանի որ քրդական կողմից հրազեն չի օգտագործվել: Ավելին, այն սկսվել է որպես քաղաքացիական անհնազանդության զանգվածային ակցիա: Ի՞նչ կարող է անել «ԵՄ-ի հետ ժողովրդավարություն խաղացող» Անկարան խաղաղ բնակչության ցույցերի դեմ: Քրդերն ավելի հեռու գնացին. նրանք դիմեցին խորհրդանշական պատկերների, որոնք շատ կարեւոր են հեռուստատեսությամբ կառավարվող մեր ժամանակաշրջանում: Ոստիկանների ու կանոնավոր բանակի դեմ դուրս եկան ոչ թե զինյալներ, այլ երեխաններ՝ քարերով, շշերով:

Այնուամենայնիվ, Անկարան ձեռքերը ծալած նստած չէ: Պետությունը մշակել է հետաքրքիր մի ռազմավարություն. քանի որ նա չի կարող լուծել քրդական խնդիրը «ժողովրդավարական» խաղի մակարդակում, ապա անհրաժեշտ է քրդական քաղաքական պայքարն իշեցնել ռազմական բախման մակարդակի, որտեղ Անկարան ունի մեծ փորձ եւ, իհարկե, կանոնավոր բանակ, իսկ ահարեկչական գործողությունների առկայության պարագայում՝ նաեւ միջազգային հանրության բարոյական աջակցություն: Ահա այս շրջանակում պետք է դիտարկել պաշտոնական լրահոսի մեծ մասը կազմող հաղորդագրությունները «քուրդ ահարեկիչների հերթական պայթեցումների, ոստիկանների հետ ռազմական բախումների, նահատակված զինվորների եւ ոստիկանների» մասին: Ամենայն հավանականությամբ, սրանց մեծ մասը պետական ուժերի սաղրիչ քայլեր են, որոնց նպատակն է խաղի մեջ ներքաշել ՔԲԿ-ին, ինչպես նաեւ շիկացնել մթնոլորտը հասարակությունում՝ ստեղծելով ռազմական լայնածավալ հակասարեկչական գործողությունների պահանջ:

* * *

Պետության, մասնավորապես՝ զինվորականության մտահոգության առիթ է նաեւ իսլամիզմի ահագնացող աջը երկրում: Եվրամիությունն իր օրենքներով ազատում է «իսլամական ջինին շշից», որը երկար տարիներ փակված էր զինվորականության կողմից: Իսլամիստական շրջանակներն իրենց առավել ազատ զգացին ԱԶԿ իշխանության գալուց հետո: Այսօր իսլամիստների զսպաշապիկի դեր է խաղում հիմնականում համբաւետության նախագահ Ա.Ն. Սեգերը, որն ի պաշտոնե իրավունք ունի վետո դնել խորհրդարանի ընդունած յուրաքանչյուր որոշման վրա՝ առանց որեւէ հստակ պատճառաբանության: Սակայն այս իրավիճակը երկար տեւել չի կարող, քանի որ նախագահի լիազորությունները դադարում են 2007թ., իսկ Թուրքիայում նախագահն ընտրվում է խորհրդարանի կողմից, որտեղ այժմ մեծամասնություն են կազմում իսլամիստ ԱԶԿ-ականները, որոնք, ամենայն հավանականությամբ, 7 տարի ժամկետով նախագահ կընտրեն այժմյան վարչապետ Ռ.Թ. Էրդողանին: Այդուհետ խորհրդարանի ընդունած որոշումները չեն կասեցվի, եւ իսլամիստների գործողություններն ավելի կագրեսիվանան:

Դասարակության շրջանում հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ գնալով ավելի է խորանում Թուրքիայի ներքին պառակտումը, որի արեւմտյան մասը ծգոտում է դեպի Եվրոպա, իսկ հիմնականում արեւելյան վիլայեթները՝ դեպի իսլամական արեւելք: Դասարակության այս զանգվածների հակադրությունը խիստ սկզբունքային է, եւ այն չի կարելի շարունակապես անտեսել: Միաժամանակ, հետագա ժողովրդավարացումը կարող է բերել ճրան, որ ավելի մեծաթիվ իսլամիստներն իրենց լիակատար իշխանության տակ կվերցնեն երկրի կառավարնան դեկն ու Թուրքիան կուղղորդեն համաձայն իրենց համոզնքների:

Այս դեպքում իրավիճակի զարգացման սցենար կարելի է համարել Թուրքիայի վարչական նոր բաժանումը եւ վերափոխումը համադաշնության՝ Անկարա մայրաքաղաքով, իր երեք իրավահավասար սուբյեկտներով՝ արեւմտյան Թուրքիա (կենտրոնը՝ Ստամբուլ), իսլամիստական Թուրքիա (կենտրոնը՝ Քողիա), քրդական ինքնավարություն (կենտրոնը՝ Դիարբեքիր):

Ակնհայտ է, որ Գլխավոր սպայակույտը երբեք կամովին թույլ չի տա իրերի այնպիսի զարգացում, որը կարող է բերել այս իրավիճակին:

Դեպքերի անկառավարելիության մակարդակի բարձրացման, ինչպես նաև ԵՄ շարունակական ճնշումների պարագայում զինվորականությունը, ամենայն հավանականությամբ, կիրականացնի մի նոր թավշյա հեղաշրջում՝ հետ գցելով Թուրքիային հետագա ժողովրդավարացման ուղղուց, սակայն փրկելով տարիներով փայլայած խճանկարի ներկա տեսքը:

Միաժամանակ, Անկարան իր քայլերում դեռ շարունակում է հաշվի նստել Վաշինգտոնի հետ, եւ Թուրքիայում տեղի ունեցող ներկայիս գործընթացները հիմնականում համահունչ են Բուշի վարչակարգի որդեգրած Մեծ Մերձավոր Արեւելք նախագծին, որի էությունն է ժողովրդավարացնել տարածաշրջանն՝ աջակցելով չափավոր իսլամիզմի զարգացմանը: Ու թեեւ Գլխավոր սպայակույտն այսօր չի կարող իրականացնել հեղաշրջում առանց ԱՄՆ-ի հետ խնդիրներ ունենալու, սակայն պետք է հաշվի առնել, որ վերոնշյալ նախագծի հավանական ձախողումը լայն հնարավորություններ կբացի զինվորականության առջեւ:

ՌՈՒՍԱՏԱՆ. ԽՆԴԻՐՆԵՐ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ Գագիկ Տերտերյան

Վերջին մի քանի տարիներին Ռուսաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումները որակական փոփոխություններ են կրել: Մասնավորաբես ԱՄՆ-ի հետ այդ տերության հարաբերություններն ավելի ու ավելի են հիշեցնում սառը պատերազմի տարիները. տեղեկատվական դաշտում արդեն իսկ հայտնվել են այդ տերությունների հարվածային միջուկային հնարավորությունների համեմատությունները, արծարծվում է Ռուսաստանին «Մեծ ութնյակի» ձեւաչափից վտարելու խնդիրը, խոչընդոտվում է այդ երկրի՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամագրումը եւ այլն: Անշուշտ, համեմատությունը սառը պատերազմի տարիների հետ գուցե եւ այնքան էլ տեղին չէ, քանի որ ժամանակակից Ռուսաստանը, թեեւ պահպանել է իր միջուկային գերտերության կարգավիճակը, դեռեւս չունի ԽՍՀՄ քաղաքական ազդեցությունը եւ տնտեսական հզորությունը: Սակայն առկա են այլ իրողություններ, որոնցից ամենահիմնականը ռուս-չինական ռազմավարական սերտաճման միտումն է:

Ռուս-ամերիկյան հարաբերություններ

Տարվա սկզբին ԱՄՆ Արտաքին հարաբերությունների խորհրդի (ԱՀԽ) ղեկավար Ռիչարդ Ջաասը հանդես եկավ հայտարարությամբ, թե սառը պատերազմի ավարտից անցել է ավելի քան 15 տարի եւ եկել է Ռուսաստանի հանդեպ ունեցած քաղաքականության փոփոխման ժամանակը: Նկատենք, որ ԱՀԽ-ն ոչ պետական կազմակերպություն է, սակայն մեծ, իսկ հաճախ՝ որոշչիչ դերակատարում ունի ԱՄՆ գլոբալ ռազմավարության մշակման խնդիրներում: Որպես Ջաասի հայտարարության շարունակություն՝ մարտի առաջին օրերին ԱՀԽ-ի կողմից ձեւավորված «Անկախ աշխատանքային խումբը» ներկայացրեց «Ռուսաստանի հանդեպ ԱՄՆ քաղաքականությունը» խորագրով զեկուցագրը: Խմբի ղեկավարն իր հակառական տրամադրություններով հայտնի, նախկինում ԱՄՆ հատուկ հանձնարարություններով դեսպան եւ պետքարտուղարի՝ հետխորհրդային պետությունների գծով հատուկ

խորհրդական Մթիվեն Սեստանովիչն է: Աշխատանքային խմբի գեկուցագրի հիմնական դրույթները, դատելով իրապարակումներից, հետեւյալն են.

❖ Ոուսաստանն աստիճանաբար հեռանում է ժողովրդավարության սկզբունքներից եւ այսօր այնտեղ հաստատվել է «փափուկ» ավտորիտար համակարգ: Այս առումով ԱՄՆ-ը պետք է հատուկ ուշադրություն դարձնի 2008թ. ընտրություններում Պուտինի հետնորդի ընտրման գործընթացում ժողովրդավարական նորմերի եւ լեգիտիմության սկզբունքի պահպանմանը: Մատնանշվում է, որ Ոուսաստանը փորձում է տարածել իրեն բնորոշ հակաժողովրդավարական միտումները հարեւան երկրներում (այս համատեքստում առաջին հերթին դիտարկվում են Ռուսաստանի և Վրաստանի պահպանական առողջապահության մասին հարաբերությունները):

❖ Մտահոգություն է հայտնվում, որ Ոուսաստանն աստիճանաբար հետ է կանգնում 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ստեղծված հակահարեկչական կոալիցիայի մշակած սկզբունքներից. այդ կապակցությանք նշվում է պաղեստինյան ՀԱՍԱՍ-ին առնչվող՝ Ոուսաստանի հայտնի դիրքորոշումը:

❖ Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ Ոուսաստանի ունեցած դիրքորոշմանը: Համարվում է, որ այդ դիրքորոշման էությունն է հանդիսանում այն ցուցանիշը, համաձայն որի պետք է կառուցվեն հարաբերությունները Ոուսաստանի հետ:

❖ Ընդհանուր առմամբ, աշխատանքային խումբը եկել է այն համոզման, որ Ոուսաստանն ակնհայտորեն դուրս է եկել ամերիկյան-արեւմտյան քաղաքականության ուղեծրից եւ փորձում է վերականգնել նախկին դիրքերն աշխարհում:

❖ Վերոհիշյալ փաստարկները, ըստ աշխատանքային խմբի, վկայում են այն մասին, որ ԱՄՆ քաղաքականությունը Ոուսաստանի հանդեպ պետք է փոխվի:

Հայտնի է, որ վերջին տարիներին ԱՄՆ-Ոուսաստան հարաբերություններն արդեն իսկ բարվոք չեն: Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով ԱՇԽ դերակատարումը ամերիկյան քաղաքականությունում, կարելի է փաստել, որ արդեն պաշտոնական մակարդակով ԱՄՆ-Ոուսաստան հարաբերությունները թեւակոխել են մի նոր փուլ, որը բնութագրվում է լարվածության եւ հակասությունների բավական բարձր աստիճանով:

Դրա վկայությունն է այն, որ «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմա-վարություն-2006» հայեցակարգում տեղ գտած ձեւակերպումները Ռուսաստանում ժողովրդավարության վիճակի վերաբերյալ, փաստորեն, կրկնում են ԱՀՆ եզրակացությունները:

ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների դիվանագիտական քաղադրիչի արտացոլումն են Վաշինգտոնում կայացած արտգործնախարար Լավրովի բանակցությունները Զորջ Բուշի եւ Քոնդոլիզա Ռայսի հետ: Լրատվական դաշտում հայտնված արձագանքներից եւ այցից հետո Լավրովի տված հարցազրույցից հետեւում է, որ մասնավորապես ամերիկյան ծննդումների հետեւանքով է, որ առայժմ սառեցվել է Իրանի հետ ուրանի հարստացման համատեղ ձեռնարկություն ստեղծելու նախագիծը:

ԱՄՆ կոչտ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ հատկապես դրսեւորվում է ՄերձԴնեստրի տնտեսական շրջափակման խնդրում: Հայտնի է, որ ՄերձԴնեստրի խնդիրը սկզբունքորեն տարբերվում է օսական, արխազական կամ, առավել եւս, Ղարաբաղյան խնդիրներից: Միջէրնիկական հարցերն այդ երկրամասում քավական թույլ են արտահայտված (բնակչության մոտ 40%-ը մոլդովացիներ են, 30%-ը՝ ուկրաինացիներ եւ 30%-ը՝ ռուսներ), իսկ անջատողական տրամադրությունները գերիշխող չեն. քավական է հիշել այդ շրջանի պաշտոնական անվանումը՝ ՄերձԴնեստրի Սոլդովական Յանրապետություն: Խնդիրները հիմնականում կրում են տնտեսական (ՄերձԴնեստրում է կենտրոնացած Սոլդովայի արդյունաբերական համալիրը) եւ քաղաքական (Մոլդովան, որի բնակչության կեսից ավելին Ռումինիայի քաղաքացի է, ծգտում է միավորվել այդ երկրի հետ) բնույթը: ՄերձԴնեստրի դեկավարությունը եւ բնակչությունը համաձայն են լինել Մոլդովայի կազմում՝ ինքնավար հանրապետության կարգավիճակով, եւ դեռ 2004թ. այդ խնդիրը («Կոզակի պլանի» շրջանակներում) գրեթե լուծվել էր: Սակայն Արեւմուտքը (այս հարցում ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը համերաշխ են) ստիպեց Մոլդովայի դեկավարությանը մերժել այդ պլանը: Կասկած չի հարուցում, որ Ուկրաինա ներմուծվող մերձԴնեստրյան ապրանքների նկատմամբ վերջերս մաքսային նոր կանոնների ընդունումը (դրանք, ըստ նոր կարգի, պետք է ձեւակերպվեն Քիշնեւի մաքսային ծառայությունների կողմից), ինչը վնաս է նաեւ Ուկրաինային (սակայն որին փոխհատուցեցին, այսպես կոչված, Ձեքսոն-Վենիկի օրենքի լրացման վերացմամբ եւ ԱՀԿ ընդունելով), նույնապես հրահրված է Արեւմուտքի կողմից: Ակնհայտորեն, այս ամենը գլխավորապես ուղղված է ՄերձԴնեստրում ռուսական խաղաղապահների ներկայության դեմ:

Բնորոշ է, որ նման բնույթի եւ ուղղվածության գործողություններ այսօր իրագործվում են նաեւ Հարավային Օսիայում:

Վերոհիշյալ միտումներն արտահայտվում են նաեւ ԼՂՀ խնդրում: Ամերիկյան աճող ակտիվությունն այս հարցում ուղղված է արդեն ոչ միայն Իրանի, այլև ՀՀ-ում եւ Աղրբեջանում աճող ռուսական ազդեցության ռեմ: Այս համատեքստում ԱՄՆ-ը փորձում է վերականգնել իր դիրքերը տարածաշրջանում, եւ, թերեւս, դրա արտահայտություններից է ՀՀ-ում նոր ԱԵԿ կառուցելու մտադրությունը: Այս կապակցությամբ նկատենք, որ ԱԵԿ-ների կառուցումը հանդիսանում է ԱՄՆ նոր էներգետիկ ռազմավարության հենքը. նախատեսվում է ԱԵԿ-ների մի մեծ համախմբի կառուցում եւ ամերիկյան մայրցանաքում, եւ Եվրասիայում, մասնավորապես Թուրքիայում՝ մոտ 10 հատ: Այդ նախագծի նպատակներից է նաեւ ռուսաստանյան գազանավթային նախաձեռնություններին հավասարակշռումը:

Ոուս-չինական համագործակցություն

Այսօր կարելի է ամրագրել, որ Ոուսաստանի եւ Չինաստանի միջեւ հետեւողականորեն ձեւավորվում է ռազմավարական բնույթի համագործակցություն գրեթե բոլոր ոլորտներում. բավական է նշել, որ վերջին մեկ տարվա ընթացքում այդ երկրների դեկավարները հանդիպել են հինգ անգամ: Չատկապես արագ տեմպերով է զարգանում տնտեսական համագործակցությունը: 2001-ի հուլիսի 16-ին կնքած պայմանագրից հետո կողմերի ապրանքաշրջանառության ծավալներն աճել են 3 անգամ եւ հասել \$30 մլրդ-ի: 2010-ին այդ ցուցանիշը նախատեսվում է հասցնել \$80 մլրդ-ի, որն արդեն համեմատելի է Չինաստան-ԱՄՆ առեւտրի ծավալների հետ (ներկայումս՝ ավելի քան \$100 մլրդ): Կա նաեւ մտադրություն ռուս-չինական սահմանամերձ շրջաններում ձեւավորել հատուկ տնտեսական գոտիներ:

Երկու տերությունների տնտեսական հարաբերություններում հատկապես պետք է կարեւորել էներգետիկայի բնագավառում ձեռք բերված համաձայնությունները: Սահմանափակ էներգետիկ ռեսուրսների տիրապետող եւ միաժամանակ տարեկան մինչեւ 10-12% աճ ունեցող Չինաստանի տնտեսության համար այդ ոլորտի խնդիրներն ամենահրատապն են: Արդեն 2006թ. Ռուսաստանից կստացվի մոտ 15 մլն տնավթ, որը կազմում է Չինաստանի տարեկան ներկրման պահանջարկի մոտ 10%-ը: Ներկայումս ընթանում են բանակցություններ սիբիրյան Անգարսկից մինչեւ չինական Դաշին հասնող \$11.5 մլրդ արժողությամբ

նավթամուղի կառուցման շուրջ: Կողմերը ձեռնամուխ են եղել նաեւ խոշոր գազային ծրագրի («Ալբայ») իրացմանը, որը ենթադրում է դեպի Չինաստան երկու գազամուղի կառուցում. դրանցից ամեն մեկը կարող է մինչեւ 30-40 մլրդ խմ գազ տեղափոխել: Նախատեսվում է մեծացնել նաեւ էլեկտրականերգիայի առաքումը. այսօրվա տարեկան մոտ 1 մլրդ կվտ/ժամից մինչեւ 18 մլրդ կվտ/ժամ՝ 2010թ.: Ընթանում են բանակցություններ նաեւ միջուկային էներգետիկայի ոլորտում:

Անշուշտ, ռուս-չինական տնտեսական համագործակցության զարգացումը զգալի չափով պայմանավորված է այդ եվրասիական տերությունների քաղաքական կողմնորոշումներով: Պեկին կատարած վերջին այցի ընթացքում Վ. Պուտինը եւ Խուո-Ցզինտան ստորագրեցին համատեղ հրչակագիր, որտեղ փաստորեն եւս մեկ անգամ հաստատվեցին այն թեզերը, որոնք անրագրվել էին 2005թ. հուլիսին Աստանայում ստորագրված հրչակագրում: Դիշենք, որ այդ վերջին փաստաթղթում ներկայացված էին կողմերի սկզբունքային մոտեցումները 21-րդ դարի աշխարհակարգի վերաբերյալ, մասնավորապես մտադրությունը՝ ձեւավորել գլոբալ անվտանգության նոր կառուցվածք, հենվելով քաղաքակրթական բազմազանության վրա: Այսօր ռուս-չինական համագործակցությունը քաղաքական ռեալ հարթությունում, մասնավորապես, արտահայտվում է Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ կողմերի ունեցած դիրքորոշումով. ինչպես հայտնի է, այդ երկրների համաձայնեցված դիվանագիտական քայլերի շնորհիվ է, որ առ այսօր Իրանի դեմ ՄԱԿ մակարդակով չեն ընդունվել պատժամիջոցներ:

Սակայն ռուս-չինական ռազմավարական համագործակցության քաղաքական ամենավառ արտահայտությունը Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) ձեւավորումն ու կայացումն է: Այդ կազմակերպությունում ներգրավված երկրների (Չինաստան, Ռուսաստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Դիտորդի կարգավիճակում՝ Ջնոկաստան, Պակիստան, Իրան) ընդհանուր ներուժի մասին են վկայուն հետեւյալ ցուցանիշները: Ջանաձայն ԱՄՆ ԿՀԿ փորձագիտական հաշվարկների՝ մոտ 2.8 մլրդ բնակչություն, 35.8 մլն քառ. կմ տարածություն ունեցող ՇՀԿ (դիտորդ երկրների հետ միասին) ՀՆԱ-ն 2005թ. կազմում էր մոտ \$14.5 տրիլիոն: Այսինքն՝ այդ ցուցանիշով ՇՀԿ-ն արդեն իսկ առանձին-առանձին գերազանցում է ԱՄՆ եւ ԵՄ տնտեսություններին, որոնց ՀՆԱ ծավալները գրեթե հավասար են (ամեն մեկինը՝ \$12 տրիլիոնի շրջակայքում):

ՇՀԿ կայացման համատեքստում պետք է հաշվի առնել նաեւ այն քաղաքական-տնտեսական միտումները, որոնք այսօր գոյություն ունեն

Հարավարեւելյան Ասիայում: Այդ տարածաշրջանի երկրները, որոնք միավորվել են ՀԱԱԱ՝ Հարավարեւելյան ասիական ազգերի ասոցիացիայի ծեւաչափում (ներառում է Մալայզիան, Ինդոնեզիան, Ֆիլիպինները, Վիետնամը, Սինգապուրը, Լաոսը, Թաիլանդը, Կամբոջան, Բրունեյը, Մյանման), այսօր ակնհայտորեն ձգտում են դեպի Չինաստան եւ ինչ-որ չափով (հաշվի առնելով սպառագինության ոլորտում առեւտրական համագործակցությունը) նաեւ Ռուսաստան: Որոշ փորձագետներ այդ գործընթացում անգան տեսնում են ապագա մեծ եվրասիական համագործակցության ուրվագծերը: Նկատենք, որ նման ծեւաչափը կարող է իրոք մրցակցել միացյալ Արեւմուտքի հետ: Օրինակ, ԱՄՆ եւ ԵՄ ընդհանուր ՀՆԱ-ն 2005թ. կազմել է մոտ \$24.5 տրիլիոն, իսկ ՇՀԿ եւ ՀԱԱԱ համատեղ ՀՆԱ-ն՝ \$17 տրիլիոն, այսինքն՝ միացյալ Արեւմուտքի եւ Արեւելքի տնտեսական ցուցանիշներն արդեն իսկ համեմատելի են:

ԱՄՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ Դավիթ Մելիք-Նազարյան

Վերջին շրջանում Ամերիկայի Միացյալ Նահանգների ինտելեկտուալ շրջանակների քննարկումների հիմնական առարկան հետեւյալ հիմնահարցերն են.

Ա. Սեպտեմբերի 11-ի իրադարձությունների ազդեցությունն ամերիկյան հասարակության մտածելակերպի եւ աշխարհընկալման վրա: Համաձայն կարծիքների՝ ամերիկացիների մեծամասնության համար այդ իրադարձություններից հետո կատարվածը բոլորովին անսպասելի էր եւ ընկալվում է որպես անշնորհակալության ու նախանձի դրսեւուրում: Անշնորհակալ է եւ նախանձ ամբողջ աշխարհը, քանի որ չկարողացավ գնահատել Միացյալ Նահանգների ասպետական վարքագիծը սառը պատերազմի ընթացքում, երբ շնորհիվ Ամերիկայի՝ աշխարհը փրկվեց ամբողջատիրությունից: Նրանք չեն գնահատում, ըստ ամերիկացիների, այն հսկայական օգնությունը, որն ամերիկացիները ցուցաբերում են բոլոր երկրներին: Բացի այդ, ամերիկացիների կարծիքով՝ իրենք կառուցել են ամենաարդար եւ պաշտպանված հասարակությունը, ուր ծգտում են ներգաղթողները ողջ աշխարհից, եւ նրանք համարում են, որ այդ արդար հասարակության կառուցման համար անհրաժեշտ արժեքների տարածումը եւ այլ հասարակություններում իրենց ջանքերով դրանց արմատավորումը ոչ թե գլոբալիստական միտումների, այլ ամերիկյան հասարակության իդեալիստական մղումների դրսեւուրում է: Այս ամենին աշխարհը մի կողմից՝ պատասխանում է պայթյուններով եւ այլ տիպի ահաբեկչական գործողություններով, մյուս կողմից՝ նախկին դաշնակիցները, նախանձելով Միացյալ Նահանգներին, չարախնդում են եւ խոչընդոտում մեղավորներին պատժելու գործում:

Ամերիկյան գիտնականներն այս տրամադրությունները գնահատում են որպես չափազանց վտանգավոր, քանի որ դրանք կարող են հանգեցնել նրան, որ արագ տեմպերով ուժգնացող մրցակցության պայմաններում կարող է բյուրեղամալ «Միացյալ Նահանգներն ընդդեմ

աշխարհի» բանաձեւ, որը կարող է դրդել ամերիկյան զինվորականներին ավելի կոշտ կերպով պնդել իրենց կողմից հավանության արժանացած նախահարձակ քաղաքականության իրականացման ռազմական ձեւերի վրա:

Ներկայումս ԱՄՆ համալսարաններում մշակվում են հատուկ ծրագրեր, որոնք ուղղված են այդ երկրի հեղինակության բարձրացմանը: Դատուկ քարոզական ձեւեր են մշակվում, որոնց նպատակն է մեղմել այն բացասական տրամադրությունները, որոնք առաջացել են աշխարհում ամերիկյան զինված ուժերի՝ Աֆղանստան եւ Իրաք մտնելուց հետո: Միացյալ Նահանգներում աստիճանաբար ավելի ու ավելի է աճում դժգոհությունը «քաղաքակրթությունների բախում» կարգախոսով ծրագրվող քաղաքականությունից:

Հաճախակի է հնչում քննադատություն նախագահ Բուշի եւ նրա վարչակազմի կողմից իրականացվող քաղաքականության հասցեին, սակայն միաժամանակ նշվում է, որ ամերիկացիները դժգոհ են ոչ այնքան արտաքին քաղաքականությունից կամ ահաբեկչության դեմ հայտարարված պատերազմից (ինչը գնահատվում է որպես հակահարված), որքան նրա ներքին քաղաքականությունից:

Բ. ԱՄՆ ռազմական ծախսերը ստիպում են նախագահ Բուշի վարչակազմին վերանայել սոցիալական ոլորտին եւ առողջապահության ուղղված գումարների ծախսման եղանակները: Ներկայումս այս ոլորտներում ծախսվող գումարների վրա շատ ավելի լուրջ հսկողություն է հաստատվում, քան նախկինում: Այսպիսի մոտեցումներից տուժում են հատկապես «նոր» ամերիկացիները, քանի որ հենց նրանք են զրկվում այս գումարներից:

Մյուս կողմից՝ անցած տարվա ընթացքում կտրուկ աճ է արձանագրվել վառելանյութի գների ոլորտում, ինչն անմիջապես անդրադարձել է նաեւ սպառողական զամբյուղի գնի վրա: Վիճակն ավելի է բարդացել աշխատատեղերի կրծատման պատճառով, ընդ որում՝ փակվում են որոշ գիտական ոլորտների այնպիսի հետազոտական ուղղություններ, որոնք ավելի ձեռնտու է իրականացնել արտասահմանում: Դետեւանքն այն է, ըստ ամերիկյան գիտնականների, որ մի շարք գիտական կենտրոններ ստիպված են կտրուկ կրծատել իրենց աշխատակիցների քանակը, եւ վերջիններս, լինելով բարձր որակավորման նաև ագետներ, ստիպված են այլ ոլորտներում աշխատանք

փնտրել: Սա վերաբերում է, հատկապես, ինժեներական մասնագիտություններին:

Այս ամենի ֆոնին՝ նորից որոշակիորեն սրվել են ռասայական եւ եթիկական խնդիրները, հատկապես վատացել է վերաբերմունքը նեգրերի նկատմամբ: Սուր է դրված նաև Լատինական Ամերիկայից ներգաղթածներին հասարակությանն աղապտացնելու խնդիրը, որը գնահատվում է իբրեւ հաջորդ տասնամյակի լուրջ հիմնահարց:

Ինտելեկտուալների շրջանակներում մեծ է դժգոհությունը «Պետրիոտ» օրենքների փաթեթից, որը թույլ է տալիս տոտալ հսկողություն հաստատել հասարակության եւ նրա անդամների անձնական կյանքի վրա: Կա եւ այլ կարծիք. «Պետրիոտ» փաթեթը միայն օրինականացրել է այն, ինչը միշտ էլ գոյություն ուներ: Սակայն այս կարծիքն արտահայտողներն ել են այն տեսակետին, որ հսկողությունն աստիճանաբար ավելի ու ավելի համատարած բնույթ է ստանում: Սակայն բոլորն ել այն կարծիքի են, որ նույնիսկ ահարեկչության վտանգը չի կարող արդարացնել մարդու իրավունքների նման սահմանափակումները, քանի որ, ըստ նրանց, ամերիկացիների հիմնական ձեռքբերումը՝ ազատությունը, կարող է սահմանափակվել միայն տրամաբանությունից դուրս չեկող օրենքներով:

Գ. Արտաքին քաղաքականության առաջնային խնդիր է դիտարկվում ահարեկչության տարբեր դրսեւորումների դեմ պայքարը, ընդ որում՝ ահարեկչության տակ հասկացվում են թե՝ «ալ-Կախան» եւ թե՝ Միրիհան ու Իրանը: Կարելի է հաստատապես արձանագրել, որ ներկայիս ամերիկյան արտաքին քաղաքականությունը որոշողները բաժանվում են երկու խմբի: Առաջինը, պայմանականորեն ասած՝ «քաղաքացիական» թեւը, կազմված է քաղաքական, համալսարանական եւ կուսակցական անցյալ ունեցող վարչակազմի տարբեր մակարդակների ծառայողներից եւ վերլուծական կենտրոնների մասնագետներից, որոնք համարում են, որ Իրանի գոյությունը ներկա վիճակով անթույլատրելի է, սակայն ռազմական ներխուժումը միայն վնաս կհասցնի Միացյալ Նահանգների շահերին: Նրանց կարծիքով՝ ամերիկյան քաղաքականությունն այս հարցում պետք է լավ հաշվարկած եւ լրջորեն ծրագրված բնույթ ունենա. Կտրուկ ու շտապողական գործողությունները կարող են ներքաշել ամերիկացիներին երկարատեւ պատերազմի մեջ, ինչը թույլ չի տա նրանց իրենց դիրքերը

պաշտպանել մյուս տարածաշրջաններում եւ կարող է ճակատագրական նշանակություն ունենալ ԱՄՆ-ի համար: Այս խմբի գնահատականներն ամերիկյան հզորության մասին գրեթե չեն տարբերվում զինվորական փորձագետների գնահատականներից, սակայն միաժամանակ «քաղաքացիական» թերը լավ հասկանում է, որ այս հիմնահարցի լուծման համար միայն տնտեսական եւ ռազմական հզորությունը բավարար չէ: Իրաք ներխուժելուց հետո Եվրոպական երկրների մեծամասնության, Չինաստանի, Ռուսաստանի խիստ դիրքորոշումը, մուսուլմանական եւ հատկապես արաբական աշխարհի դրսեւրած հակամերիկյան տրամադրությունները, մի շարք այլ երկրների, օրինակ՝ Հնդկաստանի լուր դիմադրությունը ցույց են տալիս, որ Իրանի դեպքում հակամերիկյան տրամադրություններն իրենց տեղը կզիշեն հակամերիկյան գործողություններին, ինչը զգալիորեն կնվազեցնի Միացյալ Նահանգների հնարավորություններն աշխարհում ծավալված եւ աստիճանաբար ավելի ու ավելի սուր բնույթ ստացող մրցակցությունում:

«Զինվորական» թերը կողմնակից է անհապաղ շրջափակման եւ հեռահար օդային հարվածների, որոնց պետք է զուգորդեն Պարսից ծոցում ամերիկյան նավատորմի գործողությունները՝ իրանական ռազմածովային ուժերի ոչնչացման նպատակով: Միաժամանակ ամերիկյան ուժերը պետք է ոչնչացնեն իրանական կասպիական նավատորմը: Յայսնի է, որ ամերիկացիները, օգտագործելով նաև իսրայելական տեխնոլոգիաները, արդեն իսկ տեղադրել են ադրբեջանական տարածքում ռադիոտեղորոշչի հզոր կայան, որը հնարավորություն է տալիս ամբողջովին ծածկել իրանական տարածքում տեղի ունեցող տեղաշարժերը: Առաջին իսկ հարվածներով պետք է խոցվեն բանակային դեկավարման կայանները եւ միջուկային գենքի արտադրման համար նախատեսված գործարաններն ու հետազոտական կենտրոնները: Նրանց համոզմանք, այդ գործողությունների համալիրը թույլ կտա առանց մեծ կորուստների արագորեն այնպիսի վիճակի մեջ գտնել Իրանը, որ այն ներսից քայքայվի՝ այաթոլաների դեմ ապստանքություն, եթնիկական եւ կրոնական բախումներ եւ այլն:

Յամալսարանական շրջանակները ներկայացնող վերլուծաբանները շատ մտահոգ են զինվորականների այս տիպի տրամադրություններից, սակայն նրանք կարծում են, որ Իրաքում ունեցած անհաջողությունների պատճառով «զինվորական» թերը զգալիորեն կորցրել է իր

ազդեցությունը: Մյուս կողմից՝ նրանք նշում են, որ ԱՄՆ նախագահի 2008թ. ընտրություններից առաջ հանրապետականները ստիպված կլինեն ինչ-որ դրական արդյունքներ ներկայացնել հասարակությանը, այլապես տանուլ կտան (միաժամանակ նշվում է, որ դեմոկրատները շատ վատ վիճակում են գտնվում, եւ նրանց համար նույնպես դժվար կլինի միասնական գործողություններ ծավալել):

Դամենայնդեպս, դեռևս ընդհանուր կարծիքն այն է, որ իրանի դեմ գործողություններում շտապել պետք չէ (քանի դեռ նրանք միջուկային գենքի չեն տիրացել), բայց անհրաժեշտ է ապահովել միջազգային օժանդակություն ամերիկյան գործողություններին: Այստեղից էլ՝ եւս մեկ հարց, որը շատ է քննարկվում:

Դ. ՄԱԿ կառուցվածքի եւ գործառնության բարեփոխումների անհրաժեշտությունը կասկած չի հարուցում: Սրա մասին խոսում են որպես վերջնականապես որոշված հարցի, սակայն պարզ չէ, թե ինչպես պետք է իրականացվի բարեփոխումը: Միացյալ Նահանգների համար առաջնահերթ խնդիր է ՄԱԿ հանձնաժողովների խնդիրների վերանայումը, դրանց թվի ավելացումը, իսկ անդամների թվի՝ սահմանափակումը: Առաջնային փոփոխությունները պետք է իրականացվեն Մարդու իրավունքների հանձնաժողովում, ընդ որում՝ այդ փոփոխությունները եւ ծեւին են վերաբերում, եւ բովանդակությանը: Վաշինգտոնը մտադրված է նորաստեղծ Մարդու իրավունքների խորհուրդը լուրջ աշխատանքային գործիք դարձնել այն երկրների դեմ, որոնք, ըստ ԱՄՆ-ի, այս ոլորտում չեն համապատասխանում իրենց չափանիշներին: Գլոբալ փոփոխությունների պետք է ենթարկվեն Գլխավոր ասամբլեայի կազմը եւ գործառույթները: ՄԱԿ-ը պետք է ավելի համարձակորեն միջամտի պետությունների ներքին գործերին՝ քաղաքացիական պատերազմները, մարդու իրավունքների ոտնահարման զանգվածային դրսեւորումները եւ ցեղասպանությունները կանխելու նպատակով:

Ե. Կարեւորագույն հիմնահարցերի եւ նույնիսկ մտահոգությունների թվին է պատկանում Զինաստանի հզորացման եւ վերջինիս հետ՝ գլոբալ մրցակցության խնդիրը: Ի դեպ, իրանի հիմնախնդիրը կարեւորվում է նաեւ այս պատճառով, քանի որ այն կարող է Զինաստանի համար միջանցք դառնալ դեպի Պարսից ծոց, ինչը կտրականապես ավե-

լացնում է Զինաստանի մրցունակությունը եւ դիմադրողականությունը: Սակայն ամերիկյան մի շարք վերլուծաբաններ կարծում են, որ Զինաստանում հաջորդ երկու տասնամյակների ընթացքում լրջորեն սրվելու են ներքին հասարակական, միջերնիկական եւ միջկոնֆեսիոնալ հարցերը, ինչը Պեկինին թույլ չի տա իրական մրցակցություն ծավալել համաշխարհային կառավարման վահանակին տիրանալու համար:

Ամերիկացիները մեծ խանդով եւ վիրավորվածության զգացումով են հետեւում ԵՄ՝ ինքնուրույնության ձգտող գործողություններին: Նրանք անհեռատես են համարում Եվրոպացիների՝ Եվրոպական անվտանգության համակարգ ստեղծելու ձգտումը եւ համոզված են, որ ՆԱՏՕ-ին այլընտրանք չկա:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԵՆԴԸ. ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՍՏԵՔԱԾ

Սուրեն Սարյան

Վերջին տասնամյակում լայն տարածում է ստանում, այսպես կոչված, բրենդավորումը, որով ապրանքներին, ծառայություններին, ինչպես նաև երկրներին վերագրվում են զգացական չափորոշիչներ, որոնցով մարդիկ կարող են դրանք ճանաչել: Այս իմաստով՝ Ամերիկան, Ֆրանսիան, Շնդկաստանը կամ Չինաստանը այլեւս գույտ քարտեզի վրա գտնվող երկրներ չեն, այլ մի տեսակ «բրենդ-պետություններ» համաշխարհային սպառողների համար: Բուն բրենդի տակ հասկացվում է սպառողի գաղափարը ապրանքի մասին, ուստի, «բրենդ-պետությունը» ներառում է արտաքին աշխարհի պատկերացումները տվյալ երկրի մասին:

Այսօր բրենդներն ու պետությունները հաճախ նույնացվում են աշխարհի սպառողների ուղեղներում: Օրինակ, Մայքրոստֆթն ու Մաքոնալդսը հանդիսանում են ԱՄՆ առավել տեսանելի «դիվանագետները», կամ Նոկիան՝ Ֆինլանդիայի «դեսպանորդը» աշխարհում: Դայտնի է, որ «Ամերիկա» եւ «Made in America» բրենդները խորհրդանշում են անհատական ազատությունն ու բարեկեցությունը, իսկ, ասենք, BMW-ն ու Mercedes-Benz-ը՝ Գերմանիան, գերմանական հուսալիությունն ու արդյունավետությունը: Անգամ «Արեւմուտք» հասկացությունը դարձել է բրենդ մարդկության համար, որը նրանում տեսնում է ապահով ու խաղաղ կյանքի մարմնավորում: Եվ իենց Արեւմուտքում էլ սովորել են լավագույնս օգտագործել բրենդ երեւույթը եւ օգուտներ քաղել որանից:

Արդի տեղեկատվական աշխարհի գերհագեցման պայմաններում ուժեղ բրենդը կարեւոր է օտարերկրյա ուղղակի ներդրումների գրավման, լավագույն ուղեղներին ներգրավելու եւ քաղաքական ազդեցություն տարածելու տեսանկյունից: «Խելացի» պետություններն այսօր կառուցում են իրենց բրենդները «լավ համբավի» շուրջ. առանց բրենդի պետությունը դժվարությամբ կկարողանա գրավել տնտեսական եւ քաղաքական ուշադրություն: «Պաղեստին» կամ «Իրաք» բրենդներ կրելն այսօր, բնականաբար, շահավետ եւ գրավիչ չեն, կամ եթե ԱՄՆ-ը սկսեն ընկալել Գուանտանամոյի կամ Աբու Գրեյբի բանտապանի կերպարով, իսկ Ֆրանսիան՝ անընդհատ փողոցային մարտերի տեսքով, ապա դա կարող է լրջորեն անդրադառնալ այդ երկրների համբավի ու «շահույթի» վրա:

Սովորական ապրանքների նման, բրենդ-պետությունները կախված են սպառողին բավարարելու եւ նրա վստահությունը ձեռք բերելու հանգամանքներից: Օրինակ, «քարեկամական» բրենդի տակ այսօր հասկացվում են դեպի Արեւմուտք կողմնորոշված երկրները, «վստահելի»՝ դաշնակից երկրները, իսկ «սպառնալիք»՝ այսպես կոչված «չարի առանցքի» երկրները: ՆԱՏՕ եւ ԵՄ բրենդների ձեռքբերումը դառնում է հարգվածության, ապահովության, ժողովրդավարության եւ կայունության սպառման, «արեւմտյան» լինելու նշան:

Անշուշտ, կարելի է վիճարկել, թե որոշ պետությունների իմիջը չի համապատասխանում քաղաքական, ռազմավարական եւ տնտեսական օբյեկտիվ իրողություններին, որպեսզի նրանց տրվի օգնություն ուղղակի ներդրումների տեսքով կամ առաջարկվի ՆԱՏՕ եւ ԵՄ անդամություն, ինչպես դա արվում է, օրինակ, Բուլղարիայի, Ռումինիայի, Թուրքիայի կամ Ուկրաինայի դեպքում, որոնք դեռևս բավական հեռու են «Եվրոպա» բրենդի չափանիշներից: Սակայն առեւտրում եւս սպառողները հաճախ գնում են այնպիսի ապրանքներ, որոնք տվյալ պահին օբյեկտիվորեն իրենց անհրաժեշտ չեն, սակայն նրանց գրավել է այդ ապրանքների բրենդը:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ-ը եւ ԵՄ երկրներն ունեն իրենց իմիջի հետ կապված լուրջ պրոբլեմներ, որոնք խոչընդոտում են աշխարհում նրանց քաղաքական եւ տնտեսական ազդեցության տարածմանը: Սակայն իր ձեռքը վերցնելով համաշխարհային զարգացման առաջատարի դերը՝ Արեւմուտքն իրեն վերագրեց նաեւ մնացածների «բրենդավորման» շնորհը:

Անշուշտ, Լեհաստանի, Լիտվայի, Ռումինիայի, Թուրքիայի, Ուկրաինայի, Վրաստանի կամ Ռուսաստանի նման երկրները եւս ունեն պրոբլեմներ, որոնք արգելակում են նրանց տնտեսական զարգացումը կամ փոքրացնում շանսները՝ Եվրոպայի քաղաքական եւ անվտանգության համակարգերին միանալու հարցում: Դարեր շարունակ արեւմտաեվրոպացիները Արեւելքում ապրող ժողովորդներին վերագրում էին բարբարոսական որակներ: Վոլտերի կամ Դիդրոյի համար Եվրոպայի արեւելյան մասը տարածք էր, որտեղ իշխում էին աղքատությունը, խավարը եւ հետամնացությունը: Սառը պատերազմի ժամանակաշրջանը միայն խորացրեց այս բաժանումը: Կոսովոյի կամ Չեչնիայի հակամարտությունները եւս չեն նպաստում «Եվրոպեւելքի» իմիջի բարելավմանը: Օրինակ, թեեւ բուլղարացիները եւ ալբանացիները համարում են իրենց Յարավարեւելյան Եվրոպայում բնակվող ժողովորդներ, սակայն Արեւմուտքում նարդկանց մեծամասնությունը դիտում է այս տարածաշրջանը

գուտ որպես «Բալկաններ» անուն կամ բրենդ, որն անմիջապես առաջ է բերում զուգահեռներ էքնիկական հակամարտությունների, հանցավորության եւ անկայունության հետ: Նմանապես Թուրքիան Արեւմուտքում ունի ասիական հետամնաց երկրի համբավ: Այդ պատճառով բուլղարացիների, ալբանացիների կամ թուրքերի՝ ԵՄ-ին միանալու ձգտումը, ըստ արեւմտաեվրոպական երկրներում անցկացված հասարակական հարցումների, վայելում է չափազանց ցածր մակարդակի աջակցություն: Ամերիկացիները եւ արեւմտաեվրոպացիներն այնքան էլ բարյացակամ չեն «ՆԱՏՕ» եւ «ԵՄ» բրենդները այլ ժողովուրդների հետ կիսելու հարցում, քանզի դրանց տարածումը կնվազեցնի այն հեղինակությունը, որ գալիս է Արեւմուտքի «բացառիկությունից». ՆԱՏՕ-ին եւ ԵՄ-ին անդամակցությունը խորհրդանշում է նախ եւ առաջ բարձր կարգավիճակ եւ վստահելի տեղ միջազգային հանրությունում: Ի դեպ, «միջազգային հանրություն» ասելով հասկանում են հենց ԱՄՆ-ը եւ ԵՄ երկրները:

Սեփական բրենդները պահպանելու եւ պաշտպանելու համար ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ն եւ ԵՄ-ը իրենց շարքերում հայտնվելու գինը պետք է պահեն բավական բարձր: Այսինքն՝ ԱՄՆ պետք է մշտապես ցույց տա, որ իր քաղաքականությունն իսկապես ուղղված է ժողովրդավարության եւ բարեկեցության ստեղծմանը որեւէ երկրում կամ տարածաշրջանում, իսկ ԵՄ-ը եւ ՆԱՏՕ-ն բացառեն անդամակցությունը այն երկրների, որոնք չեն համապատասխանում ԵՄ տնտեսական եւ քաղաքական չափանիշներին կամ չեն հետեւում ՆԱՏՕ ուղեցույցին: Այսինքն՝ երկու կազմակերպություններն էլ պետք է փակ պահեն իրենց դրներն այն երկրների առջեւ, որոնք ձգտում են անդամակցության՝ միայն բարեկեցիկ եւ ապահով դառնալու համար:

Սակայն ընդամենան միտումները բերեցին նրան, որ Եվրամիությունը եւ Յյուսիսալյան դաշինքը բաղձակի նպատակ են դառնում հենց ապահովության ու բարեկեցության հասնելու տեսանկյունից: Յակառակ դեպքում, նրանք կվերածվեն հարուստների փակ ակումբների, որոնք գործ չունեն դրսում մնացածների հետ: Մոտավորապես նույն ձեւով, ինչպես «Ֆիլիպ Պատեկ» կամ «Լամբորգինի» բրենդներով ապրանքները հասու են միայն հարուստ գնորդներին, իսկ ավելի աղքատ սպառողն օգտվում է «Տիտո» եւ «Օպել» բրենդներ ունեցող արտադրանքից: Մինչդեռ քաղաքական ու տնտեսական իրողությունները ստիպում են ՆԱՏՕ-ին եւ ԵՄ-ին «բացվել»՝ հետագա գոյատեման համար: Այսինքն՝ տվյալ պարագայուն նրանց բրենդները եւ քաղաքականությունները սկսում են իրար չհամապատասխանել:

Մյուս կողմից՝ Արեւմուտքի քաղաքական հակառակորդները, իրենց

հերթին, կարող են բրենդավորել արեւմտյան երկրներին: Եթե ԱՄՆ-ը կարող է իրանը կամ Սիրիան անվանել «չարի առանցքի երկիր», ապա հակագլորավիստները կամ մահմերական ծայրահեղականները ԱՄՆ-ը պիտակավորում են որպես «Մեծ Սատանա», «ագրեսոր» եւ այլն: Այնպես որ, հակամերիկյան կամ հակաարեւմտյան տրամադրությունները եւս սնուցվում են բրենդներով:

Նշվեց, որ հաճախ բրենդի հետեւում կարող է կանգնած լինել նրան չհամապատասխանող բովանդակություն: Օրինակ՝ նույն «Արեւմուտք» բրենդն արդյո՞ք արտահայտում է միասնական քաղաքական, քաղաքակրթական կամ տնտեսական երեւույթ: Մինչեւ 21-րդ դարի սկիզբը քչերն էին կասկածում ընդհանրական «Արեւմուտք» բրենդի գոյության մեջ. կարող էին լինել տարածայնություններ այն հարցում, թե ինչ է ներառում այս հասկացությունը՝ միայն ԱՄՆ-ը, Արեւմտյան Եվրոպայի երկրները, Կանադան եւ Ավստրալիան, թե՝ նաև Արեւելյան Եվրոպայի երկրները, Թուրքիան, ճապոնիան: Սառը պատերազմի ավարտը բերեց այն գիտակցման, որ «Արեւմուտք» հասկացությունն այլեւս միասնական չէ:

Ամերիկայի Սիացյալ Նահանգները մոտ 200 տարի ստեղծում էր իր բրենդը: Իսկ այսօր կարելի է արձանագրել, որ այդ բրենդը վտանգված է: Աշխարհին այլեւս այնքան վստահ չէ, որ արժեքները, որոնք առաջ են մղվում ԱՄՆ-ի կողմից, միանշանակորեն ընդունելի են: Այն տեղեկատվական գրոհը, որը տարվում է ամերիկյան քարոզչական մեքենայի միջոցով, այլեւս չի աշխատելու, եթե, ասենք, Իրաքում եւ Աֆղանստանում չհաստատվի խաղաղություն, եթե Ուկրաինայում, Վրաստանում չհաղթահարվի կոռուպցիան եւ չարնատավորվեն այն ժողովրդավարական կարգերն ու ինստիտուտները, հանուն որոնց տեղի են ունեցել Արեւմուտքից ոգեշնչված հեղափոխությունները: Երբ մարդիկ տեսնում են, որ Ամերիկան չի կատարում այն խոստումները, որոնք մատուցվում են ամերիկյան բրենդի տեսքով, ապա գալիս է հուսախարության եւ անգամ զայրույթի պահը: Ամերիկյան արժեքների փոխարեն քննադատները տեսնում են ԱՄՆ արտաքին քաղաքականության գործառնությունը, աշխարհում բարեկեցության անհամաշափ տարածումը, մարդու իրավունքների ոտնահարումները: Այս առողջությունը, թերեւս, ԱՄՆ քաղաքականությունը ստիպված է լինելու վերափոխել ամերիկյան բրենդը:

Այսօր ոմանք ավելի հզոր բրենդ են համարում Եվրոպական Միությունը կամ «Եվրոպան», որը մրցակցում է «Ամերիկա» բրենդի հետ: ԵՄ-ը բրենդավորում է իրեն որպես քաղաքակրթության եւ բարեկեցության փարոս՝ անկարգ եւ ապակողմնորոշված աշխարհում: Դրանով նա

Վիճարկում է այն բրենդը, որն ուներ ԱՄՆ-ը XX դարի երկրորդ կեսի ամբողջ ընթացքում: Երկուսն էլ ընկալում են իրենց որպես աշխարհին եւ մարդկության առաջնորդող ուժեր՝ ներկայանալով «Բլրի վրա փայլատակող քաղաքի» բրենդով, այսինքն՝ մարդկային ազատությունն ու բարեկեցությունն առավելագույնս ապահովող տարածություններ:

Ազնիայտ է, որ Եվրոպան փութաջանորեն աշխատում է իր սեփական բրենդի մշակման ուղղությամբ. ԵՄ խորհրդանշը՝ 12 աստղանի կապույտ դրոշը, այսօր ներկա է ամենուրեք, սկսած պաշտոնական շենքերից՝ մինչեւ հանրահավաքներ: «Եվրո» բրենդի կիրառմանը եւս կարելի է ամենուրեք հանդիպել՝ երկարուղիներից եւ ֆուտբոլային մրցաշարերից սկսած՝ մինչեւ դրամական արժույթ: Ամերիկյան կոշտ հզորությունը եւ նրա ընկնող ժողովրդականությունն այսօր հնարավորություններ են տալիս ԵՄ-ին տարածել իր «Եվրոպական երազանքի» բրենդը՝ դրսեւորելով իրեն որպես քաղաքակիրք գերտերություն, ի տարբերություն կովրոյական վարքագծով Ամերիկայի: Այսինքն՝ ԵՄ-ը հավակնում է հանդես գալ որպես ընկալելի գլոբալ այլընտրանք Pax Americana-ին:

ԵՄ-ը, ի տարբերություն ԱՄՆ-ի, խոսում է ոչ թե իր «ազգային շահերի», այլ իր սկզբունքների (խաղաղություն, ժողովրդավարություն եւ իրավունքի գերակայություն), գաղափարների (կայուն զարգացում, սոցիալական շուկայական տնտեսություն) եւ նորմերի (արդյունավետ կառավարում, ինստիտուցիոնալ ցանց) մասին: Այս իմաստով խոսքը Եվրոպայի «ներքին քաղաքականության» գլոբալ տարածման մասին է:

Սակայն Եվրոպայի նվաճումներն իր սահմաններից դուրս շատ ավելի համեստ են, քան Ամերիկայինը: ԵՄ-ը չունի այն ներքին վստահությունը, որն ունի Ամերիկան: Եվ քանի դեռ ԵՄ-ը չի ցուցաբերում գերտերության որակներ, նա այդպես էլ չի ընկալի որպես աշխարհի ամենահզոր բրենդ:

Եվրոպայի բրենդավորումը պետք է նապատակ հետապնդի՝ մայոցանաքի երկրների քաղաքացիներին դարձնել իրոք Եվրոպայի քաղաքացիներ: Բավական չէ տալ Եվրոպացիներին մայոցանաքային քաղաքացիություն, իրականացնել առեւտուրը մեկ միասնական արժույթով, պետք է նաեւ սովորեցնել նրանց հպարտանալ ԵՄ-ով, ինչպես հպարտ են ԱՄՆ քաղաքացիներն իրենց երկրով: Սա շատ բարդ գործ է, առավել եւս այսօրվա Եվրոպայում, որտեղ իշխում են եսակենտրոն ու գեղոնիստական արժեքները:

Մեծ հաշվով, սակայն, ե՛ւ Ամերիկայի, ե՛ւ Եվրոպայի դեպքում բրենդը պիտի պատասխանի այն հարցին, թե ինչու աշխարհը պետք է լսի, թե ինչ են նրանք ասում, ինչու ուրիշները պետք է հավանություն տան ամերիկացիների կամ Եվրոպացիների առաջարկմերին:

Ինչոր առումով մենք վկա ենք դառնում համաշխարհային քաղաքականության ուղեգծի փոփոխությանը, անցմանը աշխարհաքաղաքականության եւ իշխանության մոդեռն աշխարհից ռեպի պատկերների եւ ազդեցության հետմոդեռն աշխարհ:

Այս աշխարհում ավանդական դասական դիվանագիտությունը վերանում է ասպարեզից: Նրան փոխարինելու է գալիս ապագա, որտեղ քաղաքական գործիչները եւ դիվանագետները պետք է սովորեն կառավարել բրենդների աշխարհում: Նրանց խնդիրն է լինելու գտնել իրենց պետությունների համարժեք բրենդները, մտնել մրցակցության շուկա՝ ապահովել սպառողների գոհունակությունը եւ առաջացնել այդ բրենդների ճանաչելիությունն ու գրավչությունը: Ընդ որում՝ բրենդ-պետությունները մրցակցելու են ոչ միայն իրար միջեւ, այլև այնպիսի գերբրենդների հետ, ինչպիսիք են CNN-ը, Microsoft-ը կամ Կաթոլիկ Եկեղեցին (որը, թերեւս, ունի աշխարհում ամենահին եւ առավել ճանաչելի խորհրդանշանը՝ Խաչը): Այս գերհագեցած թատերաբենում պետությունները, որոնց պակասելու է համարժեք բրենդային մրցունակությունը, կարող են եւ չվերապրել:

ԿՐՈՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Սուրեն Մանուկյան

Արդեն տեւական ժամանակ, շնորհիվ արեւմտյան քարոզության, հասարակական գիտակցության մեջ արմատավորվում է այն կարծրատիպը, թե իսլամական կրոնը նույնական է ահարեկչության եւ ծայրահեղականության հետ: Մամուլում եւ հեռուստատեսությամբ հաճախ են հնչում «մոլեռանդ մահմեդականներ», «իսլամական ահարեկչություն», «մուսուլմանական սպառնալիք» եւ նման այլ որակումներ, որոնք կարծես դարձել են սովորական արտահայտություններ եւ թույլ չեն տալիս խորապես վերլուծել իրողությունը: Փոխարենը, գայթակղություն է առաջանում երեւույթը բացատրել իսլամի «երիտասարդ կրոն» կամ Ղուրանի «արյունաբրու եւ ռազմատենչ» լինելու պարզունակ հանգամանքներով:

Իրականում ամեն ինչ ավելի բարդ է: XXI դարի սկզբին մարդկությունը բախվում է երկու փոխլրացնող միտումների՝ գրեթե բոլոր մեծ կրոնների ներսում արմատական հոսանքների ակտիվացման եւ համաշխարհային քաղաքականությունում կրոնի դերի կտրուկ աճի հետ:

Կրոնների արմատականացում

Այսօր ավանդական կրոնների արմատականացումն ակնառու է: Այն արտահայտվում է երկու հիմնական գործոններով՝ ա) վերականգնվում են արմատներին, հավատքի նախնական սկզբունքներին վերադառնալու՝ կրոնների հիմքում ընկած ծգտումները, բ) կրոնները ցանկանում են ավելի մեծ դերակատարում ունենալ հասարակության կյանքում եւ պետության գործերում:

Թեեւ իսլամում այս երեւույթն առավել վառ է արտահայտված՝ այդ կրոնին բնորոշ մի շարք հատկանիշների պատճառով, սակայն իրականում դա համակրոնական երեւույթ է:

Բողոքական արմատականություն: «Ֆունդամենտալիզմ» եզրը եւ կրոնական արմատականության ժամանակակից դրսեւորումը հենց քրիստոնեական բողոքականության ծնունդ է, եւ պատահական չէ, որ այսօր էլ այն չափազանց ուժեղ հիմքեր ունի բողոքական երկրներում, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում: Այն ընկած է ամերիկյան ինքնության հիմքում

Եւ ամփոփված է WASP (White Anglo-Saxon Protestant՝ սպիտակ-անգլոսաքսոնական-բողոքական) հապավման մեջ: Ըստ հանրային հարցումների՝ ԱՄՆ-ում մոտ 30 միլիոն մարդ, կամ երկրի բնակչության մոտ տասը տոկոսն իրեն համարում է ֆունդամենտալիստ: Նրանք ակտիվորեն մասնակցում են համասեռամոլների կամ աբորտների թույլատրման դեմ կազմակերպված գործողություններին եւ անհաշտ պայքար են մղում այն քրիստոնյաների դեմ, որոնք համագործակցում են այլ կրոնների ներկայացուցիչների հետ:

Խոսելով ամերիկյան քաղաքականության վրա բողոքականության ազդեցության մասին՝ անհրաժեշտ է հիշել բողոքական հեռուստաքարոզիչներին, որոնք հսկայական ազդեցություն ունեն հանրային գիտակցության ձեւավորման եւ նույնիսկ բարձրաստիճան քաղաքական գործիչների վրա: Այսպես, հեռուստավետարանիչ Խալ Լինդսլը, որն իր «Մեծ հանգուցյալ մոլորակ» գրքում կանխագուշակում էր ռուսարաբական աշխարհի պատերազմն ԱՄՆ-ի դեմ, նախագահ Ռեյգանի կողմից հրավիրվում էր Պենտագոն՝ դասախոսություններ կարդալու: Նրանցից ոմանք, օրինակ՝ Աստվածային ասամբլեայի ներկայացուցիչ Փիթը Ռոբինսոնը կամ Բապտիստական եկեղեցիների խորհրդի անդամ Զերսի Ֆոլվելը, սեպտեմբերի 11-ից հետո նույնիսկ հայտարարեցին, որ կատարվածը Աստծո պատիժն էր՝ ուղարկված Ամերիկայի քրիստոնյաներին, չափից ավելի ազատականության եւ այլ կրոններին արված փոխզիջումների համար:

Բողոքականության մեծ ազդեցության վկայությունն է նաև ժամանակակից ամերիկյան քաղաքական վերնախավի եւ, առաջին հերթին, նախագահ Ջ.Բուշի ճառերում պարունակվող հստակ կրոնական հոետորությունը: Երբ նախագահ Բուշն ազդարարում է իր հերթական գործողության մասին, նա չի բավարարվում ԱՄՆ կենսական շահերը պաշտպանելու բացատրություններով, այլ շտապում է դա արդարացնել՝ հայտարարելով այն աստվածահաճ ձեռնարկ:

ԱՄՆ-ում ակտիվորեն գործում են նաև ծայրահեղ արմատական կազմակերպություններ, օրինակ՝ «Արիական ազգի քրիստոնեական եկեղեցին», որն ունի իր գինյալ խմբերն ամբողջ երկրով մեկ եւ ամենասերտ կապերն է հաստատել կու-կլուս-կլանականների հետ: «Արիական ազգի» քաղաքական նպատակն է ԱՄՆ հինգ հյուսիսարեւմտյան նահանգների տարածքում սպիտակ արիացի քրիստոնյաների պետության ստեղծումը: Այս շարժման առաջնորդներից մեկը՝ Մարկ Թոմասը, բազմիցս հայտարարել է, որ ԱՄՆ կառավարությունը «օկուպացիոն է եւ կառավարվում է իսրայելից»: Այս շարժումների հանրային վտանգա-

Վորության մասին է վկայում նաեւ նրանց ահաբեկչական գործունեությունը. օրինակ՝ 1995թ. Օքլահոմա քաղաքում կամ 1996թ. Ատլանտայում Օլիմպիական խաղերի ժամանակ իրականացված պայթյունները: Առաջինի հեղինակը «Դավթի ճյուղ» բողոքական աղանդի անդամ էր, իսկ երկրորդինը՝ այսպես կոչված «Ինքնության եկեղեցուն» էր պատկանում:

Կաթոլիկ արմատականություն: Կաթոլիկական ֆունդամենտալիզմն այդքան ծայրահեղական չէ, սակայն նույնպես շատ ազդեցիկ է: Ֆիշտ է, Շռոմի պապերն այլեւս համաշխարհային գերիշխանության չեն ծգտում կամ խաչակրաց արշավանքների կոչերով հանդես չեն գալիս, սակայն Կատոլիկանի դերն ամբողջ աշխարհում գուտ այդ ինստիտուտի հանդեպ հարգանքի արգասիքը չէ միայն: Կարելի է մատնանշել, օրինակ, կաթոլիկ եկեղեցու հսկայական դերը Լեհաստանում կոմունիզմի տապալման գործում: Այսօր էլ, լինելով ամենահարուստ ինստիտուտներից մեկն աշխարհում՝ այն շատ կարեւոր դեր է խաղում Եվրոպայում եւ Հատինական Աներիկայում ընթացող քաղաքական գործընթացներում:

Կաթոլիկ արմատական կազմակերպություններից աչքի են ընկնում, օրինակ, Մարտել Լեֆեւրի կողմից 1970թ. հիմնադրված «Սուրբ Պիոս Խ-ի միությունը», որը կատաղի պայքար է մղում եկեղեցական մոդեռնիզմի եւ էքումենիզմի դեմ, կամ Էսկրիվա դե Բալագերի կողմից ստեղծված Opus Dei-ն (Աստծո գործը), որը գաղափարական մեծ ազդեցություն է ունեցել Ֆրանկոյի, Սալազարի, Պերոնի եւ Պինոչետի վրա: Ազգային մակարդակում մեծ ազդեցություն ունեն կաթոլիկական այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Militas Dei (Աստծո զինվորները) Գերմանիայում եւ Կաթոլիկական հակառեֆորմացիայի լիգան Ֆրանսիայում: Այս կամ այն չափով կաթոլիկական արմատականության ազդեցության տակ են նաեւ Արեւմտյան Եվրոպայի մի շարք աջ ծայրահեղական կուսակցություններ՝ ֆրանսիական «Ազգային ճակատը», «Անկախ իսպանական փաղանգը» եւն:

Ուղղափառ արմատականություն: Նմանօրինակ գործընթացներ են ընթանում նաեւ Ռուս ուղղափառ եկեղեցու ներսում: Ուղղափառ հոգեւորական Արդովը նշում է, որ եթե արմատականություն նշանակում է չշեղվել արմատներից, ապա ուղղափառությունը հենց արմատականություն է: Այս ոգին թույլ է տալիս եկեղեցու կողմնակիցներին անհաշտ պայքար մղել ցանկացած նորամուծության եւ բարեփոխման դեմ ու այդ պայքարի համար օգտագործել մինչեւ իսկ ծայրահեղ մեթոդներ: Դիշենք, օրինակ, «Զգուշացե՛ք, կրոն է» ցուցահանդեսի ջախջախումը 2003թ. հունվարին՝ ռուսական ուղղափառ արմատական կազմակերպություններից մեկի անդամների կողմից:

Այսօր նմանատիպ կազմակերպությունների թվի շեշտակի աճը թույլ է տալիս խոսել ռուսական հասարակական տրամադրությունների արմատականացման մասին: Ռուսական էթնոազգայնականության անքակտելի մասը կազմող ուղղափառության կարեւոր բաղկացուցիչներից են հակաարեւմտյան ուղղվածությունը եւ ռուս ազգի թշնամիների դեմ մշտական պայքարի գաղափարը, ինչը քաղողում են մի շարք ուղղափառ արմատական կազմակերպություններ (օրինակ՝ Քրիստոնեական հայրենասիրական միությունը եւ Ռուսական ազգային սոբորը): Շատ փորձագետներ գտնում են, որ այսօր Ռուս ուղղափառ եկեղեցին արմատականացման ամենաբարձր աստիճանն ունի ոչ միայն հանրային, այլ նաև պաշտոնական նակարդակում. հոգեւորական վերնախավը մեծ դերակատարում ունի ռուսական պետության որոշումների ընդունման գործընթացում:

Յուղայական արմատականություն: Կրոնական արմատականությունը չափազանց ուժեղ է Խարայելում: Նոր խորհրդարանի պատգամավորների գգալի մասը հովանավորվում է արմատական կրոնական գործիչների կողմից: Որոշ կուսակցություններ ուղղակիորեն դեկավարվում են հրեական հոգեւորականության կողմից: Օրինակ՝ ՇԱՍ (Թորայի սեֆարդ պահապանները) շարժման նախընտրական ցուցակը կազմվում է Թորայի իմաստունների խորհրդի կողմից, որի կազմում են արեւելյան հրեական համայնքների ամենահարգված ռաբբիները: Կան նաև մի շարք ծայրահեղական հուդայական կազմակերպություններ. օրինակ՝ «Կախ» կազմակերպությունը, որի հիմնադիր Մեհեր Կահանեն ժամանակին բանտարկվել էր իսլամի կարեւորագույն սրբավայրերից մեկը՝ Ալ-Աքսա մզկիթը պայթեցնելու անհաջող փորձի համար: Եւս մեկ փաստ. 1995թ. նոյեմբերին Երկրի վարչապետ Իցհակ Ռաբինին սպանած հրեական ծայրահեղական Յոհել Լեռները դատավարության ժամանակ հպարտությամբ հայտարարեց, որ գործել է համաձայն հուդայական օրենքների համակարգի՝ Գալահայի, որը հրամայում է «սպանել իր երկիրը թշնամիներին հանձնած յուրաքանչյուր հրեայի»:

Յինդուիստական արմատականություն: Կրոնական արմատականացումն ամենասուր սոցիալ-քաղաքական հարցերից է Յնդկաստանում: Զ.Ներուի ստեղծած աշխարհիկ պետությունը ցնցում են իինդուիստ, սիբի եւ մահմեդական մոլեռանդների ամենօրյա հարձակումները:

Երկրի ներսում բավական ակտիվ գործում է «Ազգի կամավոր ծառաների միություն» կազմակերպությունը, որն իր շարքերում միավորում է մոտ չորս միլիոն մարդ եւ ունի սեփական ռազմականացված խնբեր: Ավելի նշանավոր է «Շիվսենա» կազմակերպությունը (Շիվայի

բանակ), որն աչքի է ընկնում «հիմդուիզմի պղծման» դեմ ուղղված ուժային գործողություններով: 1992թ., օրինակ, հիմդուիստական արմատականները ոչնչացրին Բաբրի-մասչիդ հայտնի մզկիթը, որը ժամանակին իսլամական նվաճողները կառուցել էին Ռամա աստծո տաճարի տեղում:

Չատ ամուր դիրքեր ունի նաև սիրիական արմատականությունը: «Խալիստանի ուժեր» եւ «Խալիստանի ազատագրական ճակատ» կազմակերպությունները փորձում են ահաբեկչության միջոցով հասնել սեփական սիրիական կրոնը դավանողների պետության ստեղծման: Դենց նրանց գոհը դարձավ 1984թ. Դնդկաստանի վարչապետ Ինդիրա Գանդին: Օրինակ՝ միայն 1990թ. սիրիերը սպանեցին մոտ չորս հազար մարդ, իսկ 1993թ. մարտին միաժամանակյա 15 պայթյունները խլեցին մոտ 200 մարդու կյանք:

Կրոնների «վերադարձը» համաշխարհային թատերաբեմ

Ուցինալիզմի դարաշրջանում սեկուլյարիզմի (աշխարհիկության) ազդեցության աճը եւ եկեղեցու բաժանումը պետությունից, թվում է թե՝ մեկընդիշտ բացառեցին կրոնի կենտրոնական դերը հասարակական կյանքում:

Սակայն 20-րդ դարի երկրորդ կեսին կրոնների ներսում սկսեցին ընթանալ գործընթացներ, որոնք թեև տարբեր պատճառներ ունեին, սակայն իրենց հիմքում մեկ ընդհանուր երեւույթի՝ հավատքի արմատականացման արտահայտություն էին: Այսօր կրոնը «վերադարձնում» է համաշխարհային քաղաքականություն: Դա ունի հիմնականում մի քանի պատճառ: Նախ՝ երկրեւեր աշխարհի փլուզման պայմաններում մարդկանց հսկայական զանգվածներ, որոնք սովորել էին իրենց պատկերացումները, արժեքային դաշտը հիմնավորել տարիների ընթացքում մշակված գաղափարախոսություններով, հանկարծ կողցրին ուղենիշները եւ այս մոլորությունից դուրս գալու համար փորձեցին գտնել կամ վերագտնել Կատարյալ ճշմարտություն, որը հանդես էր գալիս կրոնի տեսքով: Եվ այսօր ամբողջ աշխարհում նկատվում է կրոնի դերի անընդհատ մեծացում: Դայտնի տեսաբան Մ.Յուրգենսմեյերն իր «Ահաբեկչություն համուն Աստծո. կրոնական բռնության համաշխարհային վերելքը» գրքում հայտարարում է, որ աշխարհիկությունը, անկախ նրանից, թե դա ժողովրդավարական է կամ կոմունիստական-սոցիալիստական, հասարակական կազմակերպման դատարկ եւ ոչ բավարար ձեւ դուրս եկավ: «Զարմանալի է, թե ինչպիսի միաձայն կեր-

պով կրոնական քաղաքական գործիչները՝ քրիստոնյաները Արեւմտյան Եվրոպայում կամ նախկին Խորհրդային Միությունում, մահմեդական-ները կամ հրեաները Մերձավոր Արեւելքում եւ Միջին Ասիայում, սիբիրը, հնդիկները կամ բուդդայականները Յարավային եւ Յարավարեւյան Ասիայում մերժում են արեւմտյան ծագում ունեցող քաղաքական գաղափարախոսությունները...»:

Մյուս կարեւոր պատճառը միաբեւեր աշխարհում արեւմտյան, մեծ մասամբ բողոքական արժեքների տարածումն է եւ դրա դեմ «ոչ արեւմտյան» ազգերի ընդգումը: Վերադարձը դեպի արմատներ, այդ թվում նաև կրոնական ակունքներ, բնորոշ է ճգնաժամի մեջ գտնվող եւ ելքեր փնտրող հասարակություններին: Շատ հաճախ դա հակադրությունն է այն արժեքների հանդեպ, որոնք չեն համապատասխանում տվյալ հասարակության պատճական եւ մշակութային զարգացմանը:

Այսօր աշխարհում հակամարտությունների մեծ մասի, եթե ոչ հիմնական պատճառը, ապա գոնե ուղեկցող հատկությունն է կրոնական հակասությունը կամ անհանդուրժողությունը: Կրոնների ժամանակը վերստին եկել է:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՋ

Արաքս Փաշայան

Այսօր, ավելի քան երբեւէ, իսլամական աշխարհի համար հրատապ է իսլամական հեռանկարի հարցը: Որքանո՞վ է պատրաստ իսլամական աշխարհն ընդառաջ գնալ ժողովրդավարացման գլոբալ գործընթացներին: Արդյո՞ք իսլամական աշխարհն ունի որոշակի ռազմավարություն՝ դիմակայելու 21-րդ դարի մարտահրավերները, որոնք կապված են նաև աշխարհում իսլամական քաղաքակրթության նկատմամբ առկա անհանդուրժողականության հետ:

Նշենք, որ իսլամական աշխարհում տարբեր, երբեմն հակոտնյա մոտեցումներ կան իսլամական հեռանկարի վերաբերյալ: Անենաարմատական կեցվածքն ունեն ֆունդամենտալիստները, որոնք կտրականապես դեմ են իսլամական աշխարհում օտար արժեքների ներդրմանը եւ գտնում են, որ իսլամական աշխարհը պետք է զարգանա սեփական՝ զուտ իսլամական ուղիղով: Արեւմտյան ժողովրդավարությունը, առավել եւս գլոբալիզացիան, նրանք համարում են Արեւմուտքից եկող սպառնալիք, ինչը ոչ միայն մահմեդականներին պարտադրում է այլ աշխարհներներում եւ արժեհամակարգ, այլեւ հաստատում է Արեւմուտքի ռազմական գերիշխանությունը: Վերապահ է ֆունդամենտալիստների դիրքորոշումը նաև ոչ իսլամական աշխարհի նկատմամբ: Նման մոտեցումն անխուսափելի հորեն արմատականացնում է իսլամի դիրքերը՝ անջրապետելով իսլամական աշխարհը մնացյալ աշխարհից:

Դարց է առաջանում մի՞թե իսլամը չունի քավարար գաղափարական ներուժ՝ խուսափելու առճակատումներից եւ իր հավատակիցներին առաջարկելու իրապես կենաունակ եւ իսլամի մոտեցումների վրա խարսխված հայեցակարգ, որ կարող է համադրել իսլամական արժեքները այլ քաղաքակրթությունների ձեռքբերումների հետ՝ ընդառաջ գնալով ժամանակի պահանջներին:

Վերջին շրջանում իսլամական իրականության մեջ աստիճանաբար բյուրեղանում է մի գաղափարախոսական չափավոր ուղղություն, որը ժամանակակից աշխարհի արժեւորման սեփական տեսակետն ունի՝ հիմնված շարիաթի ընդհանուր սկզբունքների վրա: Ինչպես գտնում է իրավունքի հայտնի մասնագետ Լ.Սյուկիյահնենը, արդի գլոբալ մարտահրավերների առջեւ հենց չափավորությունը կարող է դառնալ

արդյունավետ ռազմավարություն ժամանակակից իսլամի համար:

Այս մոտեցումն աստիճանաբար ձեւավորվում է առանձին մահմեդական երկրների պաշտոնական շրջանակներում՝ ձեռք բերելով հանգուցային նշանակություն ազգային եւ համախաղական քաղաքականության մեջ: Ասվածի ապացույցն է վերջերս քուվեյթի իսլամական գործերի նախարարության նշանակած «Յենտրիզմը՝ կենսակերպ» հայեցակարգը, որի համաձայն՝ ցենտրիզմը պետք է ընկալել որպես իսլամական հավասարակշռված ու չափավոր մոտեցում արդի աշխարհում: Ըստ այդմ՝ շարիաթը ոչ թե քարացած մի տեքստ է, այլ որոշակի արժեքների վրա հիմնված ուղի, որը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել նոր իրողությունները: Չպետք է կուրորեն հետեւել արդեն հնացած կարծրատիպերին կամ միայն որոշակի կրոնաիրավական ուղղության, այլ պետք է ձգտել փոփոխությունների, հակված լինել փոխզիջումների: Միայն չափավորության ելակետից ընտրված իսլամական սկզբունքները կարող են ընդառաջ գնալ ժամանակի հրանայականին:

Յենտրիզմը միջին ճանապարհ է եւ կողմ է գիտակցական հավատքին: Այն քաջալերում է ստեղծագործական միտքը՝ կարեւորելով իջրիհաղը, այսինքն՝ իսլամական սկզբունքների ազատ մեկնությունը: Դայեցակարգի կարեւոր դրույթներից է այն, որ թույլատրելի է համարվում տարակարծությունը, ինչի իրականացման համար առաջարկվում է հիմնավոր փաստարկումներով ամրագրված երկխոսություն՝ ինչպես ներիսլամական, այնպես էլ այլ կրոնների եւ նշակույթների շրջանակներում: Անընդունելի են իսլամական սկզբունքների միակողմանի մեկնաբանությունները եւ այդ համատեքստում՝ ընդդիմախոսներին անհավատության մեջ մեղադրելն ու ուժով նրանց սեփական տեսակետները պարտադրելը:

Նշվում է, որ իսլամական մոլեռանդության հիմնական պատճառներից են ինքնամեկուսացումն ու ներփակվածությունը: Իսլամական քարոզչությունը ներկայումս պահանջում է մոտեցումներ, որ արտացոլեն ժամանակի իրողությունները: Իսլամը պետք է բաց լինի աշխարհի առաջ:

Որպես հայեցակարգի ներդրման երաշխավոր հանդես է գալիս պետությունը, որն իր վրա է վերցնում վերոհիշյալ սկզբունքների ներդրում՝ ամրապնդելու ազգային միասնությունը, հաղթահարելու արմատականությունը: Պետությունը հանգուցային դեր պետք է կատարի՝ կոորդինացնելու եւ մերձեցնելու իսլամական գիտելիքի տարբեր կենտրոնների եւ մտածողների տեսակետները:

Նման հայեցակարգերի ի հայտ գալը փաստում է, որ իսլամական առանձին շրջանակներ գիտակցում են, թե չափավորությունը՝ որպես

մոտեցում, իսլամական աշխարհի զարգացման կարեւոր նախապայման է, ինչի արդյունքում իսլամական աշխարհը կարող է մասնակից դառնալ գլոբալ գործընթացներին՝ առանց կորցնելու սեփական նկարագիրը:

Յիշյալ ռազմավարությունը համընկնում է նաեւ ոչ իսլամական երկրներում մահմեդական փոքրամասնությունների հետաքրքրություններին: Այս պարագայում, օրինակ, Եվրոպական հանրությանը մահմեդականների ինտեգրումը չի թվում անիրական: Ասվածի ապացույցն է Բոսնիայի եւ Յերցեգովինայի մոլֆտի Մուստաֆա Ցերիչի կազմած եւ վերջերս հրապարկված «Եվրոպայի մահմեդականների հռչակագիր»:

Հռչակագրում հավաստիացվում է, որ Եվրոպայի մահմեդականները նվիրված են Եվրոպական հիմնարար արժեքներին եւ ցանկանում են ինտեգրվել քաղաքաց Եվրոպական հանրությանը՝ իրենց ներդրումն անելով նրա սոցիալական, քաղաքական եւ մշակութային կյանքում:

Եվրոպայի մահմեդականներն ակնկալում են, որպեսզի Եվրոպական երկրներում իսլամն ունենա ինստիտուցիոնալ ներկայացվածություն, մահմեդական համայնքն ապրի իր լիարժեք կյանքով, օգտվի քաղաքական ազատություններից, ինչը հնարավորություն կտա ունենալ սեփական ներկայացուցիչներ Եվրոպական երկրների պառամենտներում:

Հռչակագիրը կոչ է անում քարեփոխել Եվրոպական ներգաղթի քաղաքականությունը, պաշտպանել մահմեդականներին իսլամաֆորիայից եւ էթնիկ խտրականությունից:

Եվրոպացի մահմեդականները պատրաստ են երկխոսության, ինչը կնպաստի համընդհանուր տեսակետների մշակմանը եւ տարբեր էթնոկոնֆեսիոնալ խմբերի հնարավորություն կտա ապրել քարի կամքի մբնոլորտում՝ հարգելով միմյանց արժեքները: Եվրոպայում ապրող մահմեդականները պետք է հանդես գան որպես նոր ծեւավորվող Եվրոպական միասնական իսլամական մշակույթի կրողներ:

Հռչակագրում մեծ պատասխանատվություն է դրված մահմեդական նոր սերմնի վրա, որը պետք է փորձի հաղթահարել այն կարծրատիպերը, որ գոյություն ունեն հենց իսլամական աշխարհում: Հռչակագրում մահմեդականներին կոչ է արվում ընդառաջ գնալ գլոբալ գործընթացներին, քանի որ իսլամն իր բնույթով ունիվերսալ կրոն է եւ համաշխարհային երեւույթ: Ահա այս համատեքստում էլ իսլամին գլոբալ գործառույթ է վերապահված համաշխարհային գործընթացներում: Հռչակագրում նշված է, որ իսլամը պետք է ձգտի լիդերության՝ մասնակից դառնալով մարդկության առաջ կանգնած հիմնահարցերի լուծմանը:

Ուշագրավ է, որ Եվրոպայի մահմեդականները կոչ են անում համայնշխարհի իրենց հավատակիցներին՝ գործուն մասնակցություն ունենալ

աշխարհում խաղաղության եւ անվտանգության հաստատման գործընթացին: Յոչակագիրն ի լուր աշխարհի հայտարարում է, որ խլամը ճշմարիտ, խաղաղասեր եւ արդարադատ կրոն է: Միալ է ահաբեկչությունը վերագրել մի ամբողջ քաղաքակրթության, դրա մեղավորությունը պետք է կրեն առանձին անհատներ: Մահմեդականները պետք է բոլոր ջանքերը գործադրեն՝ պայքարելու խլամաֆորիայի դեմ:

Խլամական աշխարհում չափավորականության՝ որպես խլամական գաղափարախոսական ուղղության ի հայտ գալը վերստին փաստում է *հետիսլամիզմի* ժամանակակից տեսությունը: Յիշյալ տեսության համաձայն՝ 21-րդ դար խլամական աշխարհը մուտք կգործի՝ զարկ տալով արդիականացմանը, ժողովրդավարությանն ու ազատականացմանը՝ առանց կորցնելու խլամական նկարագիրը, իսկ հասարակական գիտակցության մեջ որոշակիորեն կիաղթահարվի անհանդուրժողականությունը:

Խլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը՝ Խլամական կոնֆերանս կազմակերպությունը, նույնպես սեփական դիրքորոշում ունի խլամական հեռանկարի վերաբերյալ: 2005թ. դեկտեմբերին ԻԿԿ Մեքքայի գագաթաժողովում, որի խորագիրն էր «21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ՝ համերաշխությունը՝ գործադրման մեջ», ընդունվեց փաստաթուղթ, որում նշված է, թե աշխարհում խաղաղության կարելի է հասնել փոխհամաձայնության եւ ժողովուրդների հավասարության վրա հիմնված քաղաքակրթական երկխոսության միջոցով: Խլամական աշխարհի ամենահեղինակավոր ֆորումը կոչ է անում մահմեդականներին՝ չանջրպետվել մնացյալ աշխարհից, գործել չափավորության սահմաններում: Նշվում է, որ խլամական պետությունները պետք է հետամուտ լինեն ժամանակակից կառավարմանը, քաղաքացիական ինստիտուտների ձեւավորմանը, ժողովրդավարության անրապնդմանը:

Կարելի է ասել, որ ներկայումս խլամի հեռանկարի հայեցակարգն ուրվագծվում է, սակայն որքանով այն կդառնա ուղենիշ խայտաբղետ մահմեդական աշխարհի համար եւ կներդրվի գործնականում, դժվար է ասել: Դժվար է նաև ենթադրել, թե որքանով խլամական նոր հայեցակարգը կնպաստի Արեւմուտքի հետ խլամի խաղաղ գոյակցությանը՝ հաշվի առնելով այն, որ արմատական գաղափարախոսություններին տուրք տալու միտումներն այսօր հատուկ են նաեւ Արեւմուտքին, որի եքսպանսիան դեպի «Մեծ Մերձավոր Արեւելք» շարունակվում է:

ԳԼՈԲԱԼ ԱՐԱԲԵԿՉԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ 2006 ԹՎԱԿԱՆԻՆ Ողիան Յունարաթնա

Ողիան Յունարաթնան Սինգապուրի Քաղաքական բռնության եւ ահարեկչության ուսումնասիրնան միջազգային կենտրոնի ղեկավարն է, «ալ-Կահիդայի» գծով ճանաչված փորձագետ։ Ծնունդով շրիւանկացի դոկտոր Յունարաթնան նախկինում եղել է ՄԱԿ ահարեկչության ղենայքարի բաժանմունքի ավագ քննիչ։

Գնահատական

Ահարեկչական վտանգը գլոբալանուն է, եւ կառավարությունների մեջ մասն ահարեկչությանն սկսուն է վերաբերվել որպես սեփական ազգային ավտանգության ուղղված սպառնալիքի։ Սակայն, չնայած ահարեկչության դեմ պայքարում պետական ներդրումների աճին, 2006 թվականին ահարեկչության հաճախությունն ու մահաբերությունը կավելանան։ Իրաքում ահարեկչական գործողությունների բորբոքումը եւ Աֆղանստանում բռնության վերսկսումը կմեծացնեն քաղաքականապես հիմնավորված բռնության սպառնալիքը՝ ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Հարավային ու Հարավարեւելյան Ասիայում։ Ներգաղթածների շարունակական արմատականացման պատճառով սպառնալիքը Յոյու։ Ամերիկային, Եվրոպային եւ Ավստրալիային եւս կմեծանա։

Սիենույն ժամանակ, «ալ-Կահիդայի» հզորությունն աստիճանաբար կնվազի, իսկ ջիհադի գլոբալ շարժման վտանգը կածի։ Ահարեկչական բջիջների նկատմամբ իշխանությունների մեկընդմեջ հաջողությունները «կփոխատուցվեն» Իրաքում ապստամբական լայն շարժումով։ Գրոհներն Իրաքում ազդում են ողջ աշխարհի իսլամիստական խմբերի վրա՝ ինչպես աջակցության, այնպես էլ ԱՍՍ ու նրա դաշնակիցների օբյեկտների վրա հարձակումների առումով։ Ինչպես Ուսամա բեն Լադենը կառուցեց գլոբալ ահարեկչական ցանց՝ օգտագործելով Աֆղանստանը, այնպես էլ ազ-Զարքավին, «ալ-Կահիդայի» հետ գուգահեռաբար, Իրաքն օգտագործում է սեփական գլոբալ ցանցի ստեղծման համար։ Հաշվի առնելով, որ առաջնորդներն ու գլխավոր սպաները ձերբակալված են, ազ-Զարքավին Յոյու։ Ամերիկայից մինչեւ Ասիա «ալ-Կահիդայի» բջիջների վրա

հսկողություն ստանալու հնարավորություն է փնտրում: Ապստամբական շարժումն իրաքում նոր կյանք կպարգետի ջիհադի գլոբալ շարժմանը:

Զիհադի «սրբապատկերները»

Մինչ «ալ-Կահիդան»՝ որպես օպերատիվ կառույց, կորցնում է ուժը, գլոբալ ջիհադի նրա գաղափարախոսությունը վարակում է ավելի ու ավելի նոր խմբերի: Մյուս կազմակերպություններն օգտագործում են «ալ-Կահիդայի» մարտավարությունը՝ մասնավորապես, անձնասպանական գործողությունները: Արեւմտյան թիրախների վրա միաժամանակյա գրոհների կազմակերպման օպերատիվ կարողությունը մեծանում է:

Քանզի արմատական մուսուլմաններն իսլամը տեսնում են Արեւմուտքի սպառնալիքի տակ, ուստի ազ-Զարքավիհին համարում են ԱՄՆ-ին դիմակայության խորհրդանիշ: Օրինակ՝ բրիտանական բջջի առաջնորդ Սուլհամեդ Սիդիք Խանը, որը պատասխանատու է Լոնդոնում հուլիսի 7-ի ահարեւկչությունների համար, հարգանքի տուրք մատուցեց բեն Լադենին, նրա տեղակալ Այման ալ-Զավահիրիին եւ ազ-Զարքավիհին: Ներկայումս ահարեւկչական ցանցի վրա բեն Լադենի ազդեցությունը փոխարինվել է ազ-Զարքավիի ազդեցությանը: Ազ-Զարքավին զգալի ազդեցություն է ձեռք բերել լիբիական, ալժիրյան, թունիսյան ու Եգիպտական, ինչպես նաև Պարսից ծոցի ահարեւկչական բջջներում: Ահարեւկչական վեր-կայքերում ու մամուլում գերակայում է ազ-Զարքավիի իրականացրած ահարեւկչական գործողությունների լուսարամումը՝ թողնելով բեն Լադենին եւ «ալ-Կահիդային» ստվերում: Ազ-Զարքավին, որը մամուլով մանիպուլացման վարպետ է, ջանում է դառնալ գլոբալ ջիհադի խորհրդանիշ: Ամենայն հավանականությամբ, ալ-Զավահիրիի ու ազ-Զարքավիի միջև խզումը կարտահայտվի հենց 2006թ.:

Մերձավոր Արեւելք

Հետախուզական նոր կառույցների ստեղծման մեջ ԱՄՆ ներդրումների աճով եւ Պակիստանի հետախուզության հետ նրա համագործակցության ընդլայնմամբ՝ մեծանում է «ալ-Կահիդայի» ղեկավարությանը սպառնացող վտանգը: Ըստ ամենայնի, 2006թ. «ալ-Կահիդայի» վերնախավն աննախադեպ կորուստներ կկրի: Մինչ Իրաքը մնում է ազ-Զարքավիի համար հիմնական գործողությունների ասպարեզ, նա կփորձի հարված հասցնել Իրաքի սահմաններից դուրս: Յնարավոր է, կրկնվեն 2004թ. ապրիլին Յորդանանում քիմիական հարձակման փորձն ու 2005թ. նոյեմբերին երեք

միջազգային հյուրանոցներում մահապարտների իրականացրած գործողությունները, կարող է նոյնիսկ փորձ արվի՝ գրոհել Մերձավոր Արեւելքի կամ Արեւմուտքի օբյեկտները։ Այդ ժամանակ ազ-Զարքավիին աջակցելու համար ստեղծված բջիջները կվերափոխվեն ահաբեկչություններ իրականացնող բջիջների։ Իրաքյան ցանցերն արդեն ներթափանցել են առնվազն 10 եվրոպական երկրներ, ինչպես նաև Մալթիք, Լեռանտ, Պարսից ծոց եւ ձգտում են հիմնավորվել Ասիայում։

Յարավային եւ Յարավարեւելյան Ասիա

Սեպտեմբերի 11-ից հետո ձեւավորված իրավիճակը վկայում է ինչպես գոյություն ունեցող խմբերի հզորության ածի, այնպես էլ Յարավային եւ Յարավարեւելյան Ասիայում նոր իսլամիստական կազմավորումների առաջացման մասին։ Չնայած «ալ-Կահիդայի» բջիջների հետ պայքարում գեներալ Մուշարաֆի նշանակալից հաջողություններին, տեղական պակիստանյան խմբերը շարունակում են սատարել «ալ-Կահիդային»։ Laskar-e-Toiba, Jayash-e-Mohamed, Harakat-ul-Jihadi-Islami պակիստանյան խմբերն «ալ-Կահիդայի» հետ կիսում են միեւնույն մարզական ճամբարները եւ օգնում նրան գոյատեւելու։ Որպեսզի փոխհատուցվեն Աֆղանստանի ճամբարների կորուստները, Յարավային Ասիայում «ալ-Կահիդայի» մերձավոր զինակից «Զեմաա Խսլամիան» (Jemaah Islamiyah) նոր ճամբարներ ստեղծեց Ֆիլիպիններում եւ Ինդոնեզիայում։ Այս կազմակերպությունը մարզում էր Աբու Սայաֆի խմբին, Մորոյի իսլամական ազատագրության ճակատին, որոնց միջեւ գաղափարախոսական, ֆինանսական եւ մարզական համագործակցությունը շարունակ աճում է։

Միեւնույն ժամանակ, մերձավորարեւելյան խմբավորումների ազդեցությունն ասիական խմբերի վրա գնալով ավելի է մեծանում։ Առաջին նրանց ապակենտրոնացված ցանցերն ահաբեկչական գործողությունների անցկացման համար ֆինանսական օգնություն են տրամադրում հարավասիական խմբերին։ Երկրորդ ասիական գաղափարախոսների բացակայության պարագայում մերձավորարեւելյան գաղափարախոսները, ինչպիսին Աբու Մուհամեդ ալ-Մաքդիսին է (ազ-Զարքավիի ուսուցիչը), ազդում են ասիական իսլամիստների վրա։ Երրորդ Ասիայում հայտնվել են Մերձավոր Արեւելքի ահաբեկչական տեխնոլոգիաները։ Օրինակ՝ ավտոմոբիլներում տեղադրված նույնանման ռումբեր, որոնք գտնվել են Մեծ Բրիտանիայում, Իրաքում ու Սաուդյան Արաբիայում, հայտնաբերվել են Պակիստանում, Թաիլանդում եւ Ֆիլիպիններում։ Չորրորդ գլխատման գործողությունները, որ կատարվում են Իրաքում,

Կիրառվում են Պակիստանում, Աֆղանստանում ու Թաջլանդում: Թերեւս, ժամանակի ընթացքում, ջիհադի սպառնալիքի աճին զուգընթաց, այդ միտումներն Ասիայում ավելանան: Ասիական իսլամիստների հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ նրանք պատրաստ են սատարել ջիհադի իրաքյան իրենց եղբայրներին: 2005թ. Laskar-e-Toiba խումբն իր մարտիկներին ուղարկեց Իրաք, եւ հարավասիական խմբավորումները, ամենայն հավանականությամբ, կը կննեն այդ ճանապարհը:

Բանգլադেշում իսլամիստական խմբավորումների նկատմամբ վերահսկողության իրականացման գործում իշխանությունների անհաջողությունը, թերեւս, ոգեւորի Jamiatul Mujahidin Bangladesh-ին: Այս խումբն ի վիճակի է ահաբեկչություններ իրականացնել երկրի սահմաններից դուրս, մասնավորապես, Յնդկաստանում: Չնայած միջազգային միջամտությանը, ապստամբների շարժումը Նեպալում 2006 կամ 2007 թվականներին կարող է հանգեցնել մասնական կառավարության ձեւավորմանը: Խաղաղ գործընթաց տանելու Նորվեգիայի անհաջողության հետեւանքով, ըստ ամենայնի, «Թամիլ-Իլամի ազատագրության վագրերը» 2006թ. նոր փորձեր կծննարկեն՝ սպանելու առանցքային քաղաքական առաջնորդներին ու իրամանատարներին եւ իրականացնելու խոշոր ահաբեկչական գործողություններ Շրի Լանկայի հարավում: Չնայած իրենց մայրաքաղաքներում հատուկենտ ահաբեկչություններին, Յնդկաստանի ու Պակիստանի առաջնորդները կաշխատեն միասին, որպեսզի խաղաղություն հաստատեն Քաշմիրում: Աֆղանստանում ԱՄՆ ուժերը կփոխարինվեն ՆԱՏՕ գործերով: Ասիայում ահաբեկիչների համար «ամենահամեղ» պատառները՝ Քարգայը եւ Մուշարաֆը, ամենայն հավանականությամբ, կենթարկվեն ոչնչացման նոր փորձերի:

Վերջաբան

Որպեսզի նվազեցվի գլոբալ ահաբեկչական սպառնալիքը, անհրաժեշտ են գործողություններ երեք ուղղությամբ: Առաջին. աջակցել իսլամական վերնախավերին՝ գլոբալ ջիհադի գաղափարախոսությանը կոչտ պատասխանելու համար: Երկրորդ. բարձրացնել հետախուզության եւ օպերատիվ գործողությունների որակը՝ ահաբեկչական բջիջները վնասազերծելու համար: Երրորդ. հնարավորություն ստեղծել՝ տարածաշրջանային հակամարտություններն արագ լուծելու համար, որոնք բնակչությանը բերում են տառապանքներ, հանգեցնում փախստականների տեղաշարժերի եւ, որպես հետեւանք, պոտենցիալ ահաբեկիչների առաջացման:

Առանց գլոբալ ջիհաղի գաղափարախոսությանը քաղաքական ու գաղափարախոսական հակակշիռ ստեղծելու եւ տարածաշրջանային հակամարտությունները լուծելու, ուր տառապում են մուսուլմանները, ահաբեկչական խմբերն ու նրանց օժանդակության բազան կաճեն. նրանք կվերականգնեն իրենց մարդկային կորուստները: Այսպիսով, կառավարությունները ոչ միայն պետք է անմիջականորեն օպերատիվ պատասխան տան ահաբեկիչներին, այլեւ ռազմավարական հակազդեցություն ցույց տան ահաբեկչությանը:

*Նանյանի տեխնոլոգիական համալսարանին առընթեր
պաշտպանության եւ ռազմավարական
հետազոտությունների ինստիտուտ*

www.agentura.ru